ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ՁԵՌՆԱՐԿ

Երևան-2022

Հաստատված է՝
ԱԲՀ Գիտական խորհրդի
№15 «10» 2022թ. 4 նիստում
ԳԽ նախագահ՝ _____ կ.գ.թ. Ն.Սարիբեկյան

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտոր՝ Ա.Գյոզալյան

ՈԱ առաջատար մասնագետ՝ Մ.Հովսեփյան

ՈԱ աջակիցներ՝ Գ.Կիրակոսյան, Գ.Մանաշյան

Ձեռնարկը նախատեսված է ԱԲՀ բոլոր ստորաբաժանումների, պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի, Որակի ապահովման պատասխանատուների, ուսանողների համար:

Ձեռնարկի նպատակն է բարձրացնել համալսարանի որակի ապահովման և կառավարման համակարգի վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցների իրազեկվածությունը, խթանել նրանց ներգրավվածությունը և ակտիվ մասնակցությունը համալսարանի որակի ապահովման համակարգի զարգացման բոլոր օղակներում:

«ԱԲՀ-ի որակի ներքին ապահովման ձեռնարկը» պատրաստվել է՝ հիմք ընդունելով.

- Բոլոնիայի գործընթացի առաջնահերթություններն ու զարգացումները,
- Եվրոպական բարձրագույն կրթական տարածքում (ԵԲԿՏ) բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական չափորոշիչները և ուղեցույցները,
- Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը,
- ԱԲՀ որակի ապահովմանն ու կառավարմանն ուղղված վերանայված և նոր մշակված կանոնակարգային փաստաթղթային բազան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Օգտագործված տերմիններ	4
Հապավումներ	6
Ներածություն	7
Համալսարանի առաքելությունը, տեսլականը	7
I. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ	8
1.1.Բարձրագույն կրթության որակի արտաքին և ներքին ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ	8
1.2. Որակի արտաքին գնահատում	11
1.3. Ինքնագնահատում	13
II. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱԲՀ-ՈՒՄ	15
2.1. ԱԲՀ ՈԱ համակարգի նպատակները և կազմակերպական կառուցվածքը	16
2.2. Որակի ապահովման հիմնական գործընթացները, ընթացակարգերը, մեխանիզմները	17
2.3. Որակի ապահովման համակարգի ներկա վիճակը ԱԲՀ-ում	19
2.4. Որակի ապահովման կառավարում	21
2.5. Որակի մշակույթը	24
2.6. Որակի ներքոտական ապահովման չափորոշիչները և ուղենիշները	24
2.7. Ուսանողների ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում	47
III. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ	49
3.1. Որակի ներքին ապահովման քաղաքականություն	49
3.2. Մեթոդական ուղեցույց ՄԿԾ պատասխանատուների համար	57
3.3. ՄԿԾ-ների մշտադիտարկման և պարբերական վերանայման ընթացակարգ	64
3.4. ՊԴ կազմի որակի ապահովման քաղաքականություն	68
3.5. Բենչմարքինգի քաղաքականությունն	74
3.6. Ռիսկերի բացահայտման և կառավարման ընթացակարգ	77
IV. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	80

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՏԵՐՄԻՆԵՐ

- **Գնահատում**.
  - տեղեկատվության կանոնավոր հավաքման, դասակարգման և կիրառման գործընթաց, որը միտված է որոշելու գործընթացի կամ կառույցի արդյունավետությունը և համապատասխանությունը սահմանված նպատակին:
  - տեխնիկապես մշակված գործընթաց՝ ուսանողների ուսումնառության արդյունքները գնահատելու, ինչպես նաև ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար:
- **Ինքնագնահատում**. ուսումնական հաստատության կանոնավոր գնահատում՝ ներկա վիճակը ստուգելու և կարիքները բացահայտելու նպատակով:
- **Ինքնագնահատման զեկույց**. փաստաթուղթ, որն ուսումնական հաստատությունները ներկայացնում են որակի ապահովման գործակալությանն իրենց ինքնագնահատման արդյունքում:
- **Լավագույն փորձ**. մեթոդ կամ նորարարական գործընթաց, որը ներառում է բուհի կամ կրթական ծրագրի կատարողականությունը բարելավող խելամիտ գործընթացների ամբողջություն և ճանաչվում է համագործակից կազմակերպությունների կողմից:
- **Կրեդիտ**. համապատասխանեցված չափելի միավոր, որն արտահայտում է ուսումնառության մակարդակը՝ հիմնվելով ուսումնառության արդյունքների և դրանց հետ կապված ծանրաբեռնվածության վրա:
- **Կրթական չափանիշներ**. ստուգման կետեր, որոնք սահմանում են որոշակի նպատակների և/կամ չափորոշիչների իրականացումը:
- **Կրթական չափորոշիչներ**. կրթության պահանջներին վերաբերող ձևակերպումներ են, որոնք սահմանում են յուրաքանչյուր չափանիշին համապատասխանելու չափը և անաչառ գնահատման անհրաժեշտ պայմանները:
- **Հաշվետվողականություն**. նկարագրում է կազմակերպությունների կատարողականությունը՝ հասարակության և շահակիցների առջև:
- **Հավատարմագրում**. գործընթաց, որի ընթացքում գնահատվում է բարձրագույն ուսումնական հաստատության կամ կրթական ծրագրի որակը և տրվում է ճանաչման կարգավիճակ կամ գործունեությունը թույլատրող հավատարմագիր՝ լիցենզիա:
- **Մասնագիտական կրթական ծրագիր (ՄԿԾ)**. բարձրագույն կրթության հիմնական բաղադրիչ, որը ներառում է որոշակի բնագավառում կատարվող բոլոր գործընթացները՝ ուսուցման կազմակերպում, կառավարում, ուսումնառություն, հետազոտություն:
- **Որակավորումների ազգային շրջանակ (ՈԱՇ)**. ազգային մակարդակում ուսումնառության արդյունքների և կարողությունների ճանաչումը ապահովող միավոր:
- **Կրթության որակ**. բազմաչափ, բազմամակարդակ և դինամիկ հասկացություն է, որն առնչվում է ինստիտուցիոնալ առաքելությանն ու նպատակներին, ինչպես նաև հատուկ չափանիշներին՝ տվյալ համակարգի, բուհի, ծրագրի շրջանակներում:

- **Որակի սահմանումներ.** կախված մոտեցումից և օգտագործման նպատակից որակը՝ որպես գերազանցություն, որակը՝ որպես համապատասխանություն սահմանված նպատակին, որակը՝ որպես բարելավում և այլն:
- **Որակի ապահովում**. բուհի կամ կրթական ծրագրի որակի գնահատման, վերահսկման, երաշխավորման, պահպանման և բարելավման շարունակական գործընթաց է:
- **Որակի աուդիտ**. որակի գնահատման գործընթաց, որի միջոցով իրավասու արտաքին մարմինն ապահովում է (ստուգում է)՝ ԿԾ-ի ՈԱ ընթացակարգերի կամ ողջ կրթական համակարգի որակի ընդհանուր ապահովման ընթացակարգերի առկայությունը, համարժեքությունը սահմանված նպատակներին և դրանց փաստական իրականացումը:
- **Որակի ապահովման եվրոպական ստանդարտներ և ուղենիշներ**. ՈԱ Եվրոպական ասոցիացիայի (ENQA) կողմից մշակված և 2005թ. Բերգենի գագաթաժողովում ընդունված փաստաթուղթ, որը ներառում է եվրոպական ստանդարտներ և ուղենիշներ՝ որակի ներքին ու արտաքին ապահովման և որակի ապահովման եվրոպական գործակալությունների համար:
- **Որակի ներքին ապահովման համակարգ**. կառավարման կառուցվածքավորված և փաստաթղթավորված համակարգ, որը նկարագրում և իրագործում է բուհի որակի ապահովման քաղաքականությունը, խնդիրներն ու սկզբունքները, կազմակերպական լիազորություններն ու պատասխանատվությունները:
- **Որակի բարելավում**. որակի պլանավորման և որակի մոնիթորինգի միջոցով կառավարվող որակի բարձրացման շարունակական գործընթաց:
- **Որակի գնահատում** (որակի փորձաքննություն). բուհի և կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման (ուսումնասիրման, չափման, արժևորման) գործընթաց:
- **Որակի կառավարում**. բարձրագույն կրթության որակն ապահովելու նպատակով բուհի կամ կրթական համակարգի մակարդակով պարբերաբար իրականացվող միջոցառումների համակցություն՝ որակի բարելավման շեշտադրմամբ:
- **Որակի մշակույթ**. որակի համընդունելի և ինտեգրացված սկզբունքների համակարգ, որը բնորոշ է համալսարանի կառավարման համակարգին:
- **Որակի պլանավորում**. գործողություններ, որոնք խնդիրներ և պահանջներ են սահմանում որակի համակարգի առանձին տարրերի կիրառման համար:
- **Որակի վերահսկողություն**. որակի ուսումնասիրության գործընթաց, որը նպատակաուղղված է բուհի կամ կրթական ծրագրի որակի ներքին կամ արտաքին չափմանը:
- **Որակի քաղաքականություն**. ՈԱ ասպարեզում ընդհանուր մտադրություններն ու ուղղությունները, որոնք պաշտոնապես ներկայացվում են բուհի ղեկավարության կողմից:
- **Վերջնարդյունք**. կրթական ծրագրի կամ ինստիտուցիոնալ որևէ նպատակի իրագործման արդյունք:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԵԲԿՏ	Եվրոպական բարձրագույն կրթության տարածք
ԵՈՇ	Եվրոպական որակավորումների շրջանակ
ԵՉՈՒ	Եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ
ECTS	Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգ
ՈԱՇ	Որակավորումների ազգային շրջանակ
ՈԵՇ	Որակավորումների եվրոպական շրջանակ
ՈԱԱԿ	Որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱ	Որակի ապահովում
ՈՆԱ	Որակի ներքին ապահովում
ՈԱՀ	Որակի ապահովման համակարգ
ՄԿԾ	Մասնագիտությունների կրթական ծրագիր
ՊԻԳԲ	Պլանավորել, իրականացնել, գնահատել, բարելավել
ENQA	Որակի ապահովման եվրոպական ասոցիացիա
ՄՈՒՀ	Մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈՒԿՈՒ	Ուսանողակենտրոն ուսուցում
ՊԴԿ	Պրոֆեսորադասախոսական կազմ
IS	Տեղեկատվական համակարգեր
ԱԲՀ	Ավանդական բժշկության համալսարան
ՄՈԳ	Միջին որակական գնահատական
ՈՒԿՈՒ	Ուսանողակենտրոն ուսուցում

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Որակյալ բարձրագույն կրթությունն առանձնահատուկ դեր ունի ցանկացած երկրի տնտեսական, գիտական, սոցիալական և համամարդկային արժեքների զարգացման գործընթացներում: Ժամանակակից բուհերի կրթական գործունեության արդյունավետության գնահատման համար կարևոր է ոչ միայն ուսումնական գործընթացի պլանավորումն ու իրականացումը, այլ կրթական ծրագրերի իրականացման արդյունքում ձևավորված կրթական վերջնարդյունքների գնահատումը, շրջանավարտների աշխատանքի տեղավորման հնարավորությունները և աշխատաշուկայում պահանջված լինելը, որոնք պետք է լինեն կրթության արդյունքի գնահատման հիմնական չափանիշ:

Բարձրագույն կրթության Եվրոպական միասնական տարածքի ստեղծման հիմքում, ինչպես նաև ‹‹Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության›› մասին ՀՀ օրենքում մեծ տեղ է հատկացվում կրթության որակի ապահովմանը:

Որակի ապահովումը յուրաքանչյուր բարձրագույն ուսումնական հաստատության պատասխանատվությունն է, որը հնարավոր է իրականացնել միայն որակի ապահովման արդյունավետ գործող ներքին համակարգի միջոցով:

Բարձրագույն կրթության որակի շեշտադրումը հետապնդում է նաև դիպլոմների ու որակավորման աստիճանների համեմատելիության և ճանաչման ձեռքբերման, եվրոպական կրթության առավելությունների ճանաչման, վստահելիության ու մրցունակության բարձրացման նպատակներ:

Որակի ապահովումը կարևորագույն գործիք է բուհի կրթական գործունեության համար, որը երաշխավորում է ոչ միայն հասարակության պահանջների և կարիքների բավարարումը, այլև՝ բուհի անկախությունը և ինքնավարությունը:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ավանդական բժշկության համալսարանը առաջատար բժշկական բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի գործունեությունը նպատակաուղղված է բժշկական կրթության, բժշկագիտության և առողջապահության ոլորտի ազգային և միջազգային աշխատաշուկայի համար բանիմաց, բարձր բարոյականությամբ օժտված, բժիշկ-հիվանդ հարաբերության մեջ իրենց դերը գիտակցող նոր որակի բժիշկների պատրաստմանը, որոնք իրենց պրակտիկ գործունեության ընթացքում ունակ կլինեն ինտեգրել ժամանակակից և գիտականորեն հիմնավորված ավանդական բժշկության ախտորոշման և բուժման մեթոդները:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Ավանդական բժշկության համալսարանը (այսուհետև՝ Համալսարան կամ ԱԲՀ) ձգտում է դառնալ ազգային և միջազգային բարձրագույն ուսումնական հաստատություն, որն՝

- ձգտում է զարգացնել իր գերակա ուղղությունները և մրցակցային առավելությունները՝ ինտեգրել գիտականորեն հիմնավորված ավանդական բժշկության և ժամանակակից բժշկության առանձնահատուկ մոտեցումները, դրանք ներդնելով կրթական գործունեությունում, ապահովելով գիտելիքների փոխանցումը տարբեր շահակիցներին,
- առաջարկում է եվրոպական բժշկական բարձրագույն կրթական տարածքի հիմնարար սկզբունքներին համապատասխան կրթական, գիտական, հետազոտական մրցունակ բժշկական ծրագրեր,
- կլինի հասանելի, մատչելի և նախընտրելի բարձրագույն ուսումնական հաստատություն հասարակության ամենատարբեր շերտերի համար, անկախ տարիքից, սեռից, ռասայական ու ազգային պատկանելությունից, համոզմունքներից և քաղաքական նախասիրություններից,
- ունի գործուն, արդյունավետ կառավարում ու վարչարարություն, անհրաժեշտ ենթակառուցվածքներ, ժամանակակից տեխնոլոգիաներ, ուսումնական և լաբորատոր բազա, որը նպաստում է կրթության որակի անընդհատ ու շարունակական բարելավմանը,
- կրթությունը և գիտական հետազոտությունը խթանելու համար, սեփական հնարավորությունների ներդրմամբ, ունակ կլինի իրականացնելու զարգացման համակարգված ռազմավարություն:

I. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունը 2005 թվականի մայիսի 19-ի Բոլոնիայի հռչակագրի համաձայն նախկին կրթական համակարգից անցում կատարեց Բոլոնյան համակարգին: Այս հռչակագրով սահմանվեցին Եվրոպայի բարձրագույն կրթական հաստատությունների համար մի շարք հիմնարար դրույթներ, որոնցից են՝

- բարձրագույն կրթության Եվրոպական միասնական տարածքի ստեղծումը,
- դյուրընթեռնելի և համադրելի աստիճանական համակարգի ընդունումը, եռաստիճան կրթական համակարգի ընդունումը,
- ուսանողների ուսումնառության կազմակերպման կրեդիտային համակարգի հիմնումը,
- պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի շարժունությունը,
- հարատև կրթության կարևորումը:

Հռչակագիրը կարևորում է նաև կրթության որակի ապահովման գործընթացներում Եվրոպական չափանիշների և ուղեցույցների հաստատումը:

Որակի ապահովման նախադրյալների ստեղծումը ԱԲՀ-ում

Բոլոնիայի գործընթացը խթանեց բուհերում մասնագիտական կրթության որակի ապահովման ներքին համակարգերի ստեղծման, ինքնավերլուծության, ինքնագնահատման և հավատարմագրման գործընթացները:

ՀՀ կառավարության նախաձեռնած Մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումների մի շարք միջոցառումներից էր բուհերում վստահելի, ամուր և թափանցիկ որակի ապահովման համակարգի ներդրումը և զարգացումը:

Ավանդական բժշկության համալսարանում 2011 թ. ից ներդրվեց որակի ներքին ապահովման համակարգը, մշակվեցին համապատասխան ընթացակարգեր և մեխանիզմներ, որոնց օգնությամբ իրագործվում են որակի ներքին ապահովման համակարգի բարելավմանն ուղղված հստակ միջոցառումներ:

ԱԲՀ-ում կրթության որակը տրամադրվող կրթական ծառայությունների համապատասխանությունն է համալսարանի առաքելությանը և որդեգրած ռազմավարական ծրագրի նպատակներին:

Համալսարանում կրթական գործունեության որակի ապահովման, հավաստման և մշտադիտարկման աշխատանքներն իրականացվում են համակարգված, նրանցում տարբեր գործառույթներով ընդգրկվում են համալսարանի ողջ աշխատակազմը, ուսանողները, ինչպես նաև արտաքին շահակիցները:

ԱԲՀ-ի ներքին և արտաքին շահակիցներն են՝

- ուսանողները, պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմը,
- գործատուները, շրջանավարտները, դիմորդները և նրանց ծնողները,
- պետությունը, հասարակությունը:

ԱԲՀ-ի կրթության որակի ապահովման համակարգը միտված է գնահատելու իրականացվող ՄԿԾ-ների բովանդակության, կադրային, նյութատեխնիկական, ֆինանսական, մեթոդական, գիտական և այլ ռեսուրսների համապատասխանության մակարդակը համալսարանի առաքելությանը:

1.1. Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական չափորոշիչները և ուղենիշները

Որակի ապահովման Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների (ՈԱԵՉՈՒ) նպատակներն են՝

- ԵԲԿՏ բուհերում ուսանողներին մատչելի կրթության ապահովման բարելավումը,
- բուհերի որակի կառավարման և բարձրացման հարցում դրանց աջակցելը, հետևաբար, ինստիտուցիոնալ ինքնավարության հաստատման գործում օգնելը,
- որակի ապահովման գործակալությունների աշխատանքի համար հիմքերի ստեղծելը,

- որակի արտաքին ապահովումն ավելի թափանցիկ և շահակիցների համար ավելի դյուրին դարձնելը:

Այս չափորոշիչների և ուղենիշների նպատակն է աջակցել բուհերին որակի համակարգերի զարգացման, իսկ գործակալություններին՝ որակի արտաքին գնահատման իրականացման գործում: Սա ամենևին չի նշանակում, որ այս չափորոշիչները և ուղեցույցները թելադրելու են գործողություններ և մնալու են անփոփոխ:

Մասնագիտական ուսումնական հաստատությունների (ՄՈՒՀ-ի) որակի ներքին ապահովման եվրոպական և տեղական չափորոշիչները և ուղենիշները վերաբերում են հետևյալ հիմնական փիրույթներին՝

1) Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ. որակի ներքին ապահովման քաղաքականությունը պետք է արտացոլի ՄՈՒՀ-երի առաքելությունն ու որդեգրած արժեքները և սերտորեն կապված լինի թե՛ կառավարման ռազմավարական պլանի և թե՛ իրականացվող գործունեության հետ: Որակի ապահովման քաղաքականություն մշակելու և ինստիտուցիոնալ որակը պահպանելու ու բարելավելու պատասխանատվությունը, որպես կանոն, թողնվում է ՄՈՒՀ-ի կառավարման մարմնին: Որակի ապահովման քաղաքականությունը պետք է ապահովի արտաքին փորձագետների ներգրավումը որակի ապահովման քաղաքականության և գործընթացների վերանայման գործում:

2) Ծրագրերի և կրթական աստիճանների հաստատում, մշտադիտարկում և պարբերական վերանայում. հաստատությունները պետք է ունենան ծրագրերի և կրթական աստիճանների հաստատման, պարբերական վերանայման և մշտադիտարկման հաստատված մեխանիզմներ:

3) Ուսանողների ուսումնառության գնահատում. ուսանողների ուսումնառությունը պետք է գնահատվի ընդունված և հանրությանը հասանելի չափանիշներով, սահմանված կարգով ու ընթացակարգերով, որոնք համահավասար են կիրառվում:

4) Պրոֆեսորադասախոսական կազմի որակի ապահովում. հաստատությունները պետք է ունենան որակյալ և բանիմաց կազմով համալրվելու մեխանիզմներ: Դասավանդող անձնակազմը պետք է մասնակցի արտաքին վերանայմանը, և նրանց կատարած աշխատանքի որակի մասին տեղեկությունը պետք է արտացոլվի բուհի տարեկան զեկույցում:

5) Ուսումնառության ռեսուրսներ և աջակցում ուսանողներին. հաստատությունները պետք է հավաստեն, որ ուսանողներն ապահովված են առարկայական ծրագրերով նախատեսված ռեսուրսներով:

6) Տեղեկատվական համակարգեր. հաստատությունները պետք է հավաստեն, որ հավաքագրում, վերլուծում և օգտագործում են համապատասխան տեղեկատվություն՝ իրենց ուսումնական ծրագրերի և այլ գործառույթների կառավարման արդյունավետության համար:

7) Հրապարակայնություն. հաստատությունները պետք է իրենց առաջարկած ծրագրերի և կրթական աստիճանների վերաբերյալ մշտապես հրապարակեն անաչառ տեղեկատվություն:

1.2. Որակի արտաքին գնահատում

Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային համակարգերի ձևավորման գործընթացում մեծ տարածում է գտել որակի արտաքին գնահատումը, որի ժամանակ հիմնական շեշտը դրվում է որակի չափանիշներին համապատասխանության վրա:
Որակի արտաքին ապահովման գործընթացներն ունեն երեք հիմնական նպատակ՝

- **Հաշվետվողականություն և թափանցիկություն:** Որակի ապահովման գործընթացները երաշխավորում են, որ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և պետական կրթական չափորոշիչների ապահովման դեպքում հասարակության շահերը պաշտպանված կլինեն, ինչպես նաև հրապարակային են դարձնում առանձին ՄՈՒՀ-երի կրթական ծառայությունների որակը երկրի ներսում և նրա սահմաններից դուրս:
- **Վերահսկում:** Հաստատությունը ոչ միայն վերահսկում է ռեսուրսների ծախսը, այլև ցույց է տալիս, որ առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ հասնում է հնարավորինս բարձր որակի:
- **Որակի բարելավում:** Հաստատությունը քննարկումներ և վերլուծություններ է ձեռնարկում որակի ապահովման գործընթացի արդյունավետության, որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացման նպատակով:

Որակի արտաքին ապահովման գործընթացն ընթանում է 3 փուլով՝

Պետական հավատարմագրում: Պետական հավատարմագրումը պետության կողմից ՄՈՒՀ-երի գործունեության, ՄԿԾ-ների իրականացման և որակի ճանաչման գործընթաց է: Հավատարմագրումը տրվում է որոշակի ժամանակահատվածով՝ երաշխավորելով, որ ուսումնական հաստատությունը կամ կրթական ծրագիրն ունի անհրաժեշտ կարողություն տվյալ ժամանակահատվածում կրթական գործունեություն իրականացնելու համար:

Մասնագիտական կրթության հավատարմագրման հիմնական նպատակն է հավաստել բուհերին, ուսանողներին, նրանց ծնողներին, գործատուներին և շահագրգիռ հասարակությանը, որ մատուցվող կրթական ծառայությունը և մասնագիտական կրթության որակը ճանաչելի են պետության կողմից:

Բարձրագույն կրթության ոլորտում պետական հավատարմագրումը ներառում է երկու բաղադրիչ՝ **ինստիտուցիոնալ հավատարմագրում** և **ծրագրային հավատարմագրում**:

Ինստիտուցիոնալ պետական հավատարմագրում: Ենթակառուցվածքային (ինստիտուցիոնալ) հավատարմագրումը պետության կողմից ուսումնական հաստատության կրթական և որակի ապահովման գործընթացների, մասնագիտությունների կրթական ծրագրերի և պետական կրթական չափորոշիչների և ենթակառուցվածքային հավատարմագրման չափանիշների միջև համապատասխանության ճանաչումն է: Այն պարբերաբար իրականացվող պարտադիր գործընթաց է մասնագիտական բոլոր ուսումնական հաստատությունների համար: Այս գործընթացը թույլ է տալիս պարբերաբար գնահատել բուհի գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև վերահսկել իր իսկ կողմից սահմանված առաքելության իրականացման ընթացքը:

Պետք է նշել, որ ինստիտուցիոնալ պետական հավատարմագրումը նախապայման է հանդիսանում ծրագրային հավատարմագրման համար:

Ծրագրային հավատարմագրում: Ծրագրային հավատարմագրումը պետության կողմից մասնագիտության կրթական ծրագրի, մասնագետների պատրաստման որակի և պետական կրթական չափորոշիչների ու ծրագրային հավատարմագրման չափանիշների միջև համապատասխանության ճանաչումն է:

Ծրագրային հավատարմագրման թիրախն առանձին մասնագիտության կրթական ծրագիրն է, և ոչ թե հաստատության կողմից իրականացվող բոլոր կրթական ծրագրերը: Այս գործընթացը թույլ է տալիս պարբերաբար գնահատել մասնագիտության կրթական ծրագրի արդյունավետությունը, ինչպես նաև վերահսկել, արդյո՞ք այն ապահովում է ուսումնառության արդյունքների ձեռքբերումն ակնկալվող ամբողջ ծավալով:



1.3. Ինքնագնահատում

Ինքնագնահատումը գնահատման տեսակ է, որն իրականացվում է հաստատության կամ ՄԿԾ-ների շրջանակներում՝ գնահատելու համար, թե արդյոք բուհի մատուցած կրթական ծառայությունները, ինչպես նաև ՄԿԾ ները ծառայում են նախանշված կրթական նպատակներին և ուսումնառության վերջնարդյունքներին:

Ինքնավերլուծության նպատակն է բարելավել ՄԿԾ-ների որակը և համապատասխանությունը, ինչպես նաև նպաստել ուսումնառության բարելավմանը:

Բուհերը յուրաքանչյուր տարի պետք է իրականացնեն ինստիտուցիոնալ ինքնավերլուծություն, ինչպես նաև իրականացվող մասնագիտությունների ծրագրային ինքնավերլուծություն: Ինքնավերլուծությունները պետք լինեն քննադատական, այլ ոչ նկարագրական, որը հնարավորություն կտա վերանայել պլանավորած գործողությունները, վերլուծել արդյունքները, բացահայտել խնդիրները և բարելավման ոլորտները:

Պետական հավատարմագրման գործընթացին մասնակցելու նպատակով ներկայացվում է բուհի 5 տարվա գործունեության ինքնավերլուծությունը:

Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման շրջանակներում ՄՈՒՀ-ը պետք է իրականացնի համապատասխանաբար ինստիտուցիոնալ կարողությունների և ուսումնասիրվող մասնագիտության կրթական ծրագրի ներքին գնահատում՝ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված «Մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների»:

ՀՀ-ում արտաքին գնահատում իրականացնող կազմակերպությունը Որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամն է՝ ՈԱԱԿ-ը:

Ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրում անցնելու համար ՀՀ բուհերը կարող են դիմել նաև բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ռեգիստրում գրանցված, ինչպես նաև Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ընկերակցության լիիրավ անդամ հանդիսացող միջազգային հավատարմագրող կազմակերպություններին:

Ինքնագնահատման մեթոդաբանություն

Ինքնավերլուծություն նախաձեռնելու համար անհրաժեշտ է նախատեսել հետևյալ հիմնական քայլերը՝

- նպատակի հստակեցում. ինչո՞ւ պետք է նախաձեռնենք ինքնավերլուծության գործընթացը,
- վերջնարդյունքների հստակեցում. ի՞նչ արդյունքների պետք է հասնենք ինքնավերլուծության միջոցով,
- չափման և գնահատման մշակում. ի՞նչ մեթոդաբանություն, գործիքներ և մեխանիզմներ օգտագործենք չափումների համար,

- տվյալների հավաքագրում. ի՞նչ տվյալներ պետք է հավաքագրենք,
- վերլուծություններ և գնահատում. ի՞նչ մեթոդներ ենք պատրաստվում օգտագործել տվյալները վերլուծելու համար,
- որոշումների կայացում. ինչպե՞ս ենք պատրաստվում օգտագործել վերլուծության արդյունքները նոր ռազմավարություններ և զարգացումների ծրագրեր մշակելիս: /Մանրամասն ՈԱԱԿ-ի «Հայաստանի մասնագիտական կրթության համակարգում որակի ապահովման ուղենիշներ» ձեռնարկում, 2011/

II. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱԲՀ-ՈՒՄ

2.1. Որակի ներքին ապահովման համակարգի նպատակները և կազմակերպական կառուցվածքը

Որակի ներքին ապահովման համակարգի (ՈՆԱՀ) ներդրումն ու պահպանումը բարձրագույն ուսումնական հաստատությունների առաջնահերթ պարտավորությունն ու պատասխանատվությունն է: Որակի ապահովման համակարգի հիմնական առաքելությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության շարունակական բարելավման ապահովումն է, որը կարող է իրականանալ ներգրավված կողմերի ստանձնած պարտավորության շնորհիվ՝ միաժամանակ երաշխավորելով մասնակիցների կարողությունների հզորացում՝ աշխատակազմի շարունակական զարգացման միջոցով:

Որակի ներքին ապահովման գործընթացները կազմում են ուսումնական հաստատության գործունեության մաս և, քանի որ որակի ապահովման որևէ «ճշգրիտ մոդել» գոյություն չունի, հետևաբար՝ յուրաքանչյուր բուհ, հիմք ընդունելով ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները և պետական կրթական չափորոշիչները, ինքն է մշակում որակի ապահովման իր համակարգը:

Հաշվետվողականության համատեքստում որակի ապահովումը գործածվում է որպես մշտադիտարկումներ կատարելու մեխանիզմ:

ԱԲՀ ՈՆԱ համակարգի նպատակներն են՝

- նպաստել ԱԲՀ-ի առաքելության իրականացմանը՝ նրա ռազմավարական նպատակներին և խնդիրներին համապատասխան,
- պահպանել կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների սահմանված չափորոշիչները,
- ապահովել կրթական գործընթացների որակի վերաբերյալ հաշվետվողականությունը ներքին և արտաքին շահակիցների առջև,
- ստեղծել մեթոդաբանական և կանոնակարգային հիմք որակի ներքին և արտաքին գնահատումների համար, ինչպես նաև ստեղծել կապ որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների միջև,

- խթանել որակի մշակույթի զարգացումը և որակի մշակույթի շարունակական բարելավումը,
- հնարավորություն տալ հավաստելու ինքն իրեն, իր շահակիցներին, արտաքին գնահատողներին, որ Համալսարանի որդեգրած քաղաքականությունը արդյունավետ է գործում:
- օժանդակել ազգային, տարածաշրջանային և միջազգային ՈԱ գործակալությունների և Համալսարանի հետ կապերի ամրապնդմանը:

ՈԱԱԿ-ի կողմից սահմանված որակի ներքին ապահովման 4 կարևոր գործիքներն են՝

Մշտադիտարկման գործիքներ	*Ուսանողի առաջադիմությունը*	*Ուսանողի բացարձակ առաջադիմությունը (ավարտած և դուրս մնացած ուսանողների հարաբերակցությունը, քննությունը հանձնածների և ակադեմիական պարտք ունեցողների հարաբերակցությունը)*	*Հետադարձ կապ գործատուից և շրջանավարտից (ստացված արձագանքների արդյունքները)*	*Հետազոտական գործունեություն*
Գնահատման գործիքներ	*Գնահատում ուսանողների կողմից (նրանց բավարարվածությունը կրթական ծրագրից, դասախոսից, դասավանդման մեթոդներից...)*	*Դասընթացների գնահատում (ուսումնական պլանի գնահատում բոլոր շահակիցների ներգրավմամբ)*	*Կրթական ծառայությունների գնահատում*	*Հետազոտական գործունեության գնահատում*
ՈԱ հատուկ գործընթացներ	*Ուսանողի գնահատման համակարգի ՈԱ (որքանով է գնահատումը թափանցիկ, ընդունելի, հարակ,...)*	*Անձնակազմի ՈԱ*	*Ռեսուրսների և սարքավորումների ՈԱ*	*Ուսանողների աջակցության որակի ապահովում (խորհրդատվությունների իրավիրատ)
ՈԱ հատուկ գործիքներ	*SWOT վերլուծություն կամ ինքնագնահատում*	*Դասավանդման ստուգում կամ որակի աուդիտ*	*IS (փաստաթղթերի կառավարում, շահակիցներին և հասարակությանը բուհի որակի գործառույթներին տեղեկացնելը)*	*ՈԱ ձեռնարկ (բուհի կրթության որոշ գործընթացները և գործունեությունը ներառող)*

Որակի ապահովման համակարգի կազմակերպական կառուցվածքը ԱԲՀ-ում

- **Կառավարման խորհուրդ.** հաստատում է ԱԲՀ-ի գործունեության երկարաժամկետ ռազմավարական ծրագրերը, բյուջեն, հաստիքացուցակը: Տարեկան հաշվետվության շրջանակներում քննարկվում են ՄԿԾ-ների որակի ապահովման գործընթացների արդյունքները և առաջադրում բարելավման ուղիներ:
- Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության որակը վերահսկում են **ռեկտորը** և **Գիտական խորհուրդը:** Վերջինս հաստատում է ՈԱ ռազմավարությունը, քաղաքականությունը, քննարկում է ընթացիկ զեկույցները, տարեկան հաշվետվությունները և առաջարկվող բարելավումների միջոցառումները:
- **Գիտական խորհրդին կից որակի ապահովման հանձնաժողով.** այն որպես խորհրդատվական և փորձագիտական մարմին՝ գնահատում է որակի ապահովման ընթացակարգերի և չափանիշների համապատասխանությունը ընդունված չափորոշիչներին: Հանձնաժողովի նախագահը հանդիսանում է ռեկտորը, հանձնաժողովը հաստատում է որակի կանոնակարգային, ընթացակարգային փաստաթղթերը:
- **ՈԱ պատասխանատուներ.** Համալսարանի ՈԱ պատասխանատուներն են ՈԱ և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորը, ՈԱ առաջատար մասնագետը: ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը ծրագրում, կազմակերպում և հսկում է որակի ապահովման աշխատանքների կատարումը, համալսարանի ստորաբաժանումների աշխատողներին և այլ շահագրգիռ անձանց ներգրավում իր կողմից համակարգվող աշխատանքներում: Պատասխանատու է ՈԱ-ն քաղաքականության իրագործման, ՈԱ գործընթացների, մշտադիտարկման, վերանայման և բարելավման համար:

  ՈԱ առաջատար մասնագետը մասնակցում է որակի ապահովման գործընթացներին, պրոռեկտորի հանձնարարությամբ մասնակցում ոլորտային գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը:
- **Որակի աջակիցներ՝ կառուցվածքային ստորաբաժանումներում**, ներառում է ներկայացուցիչներ Համալսարանի պրոֆեսորադասախոսական, ուսանողական և վարչական կազմից, որոնք իրենց գործունեությունն իրականացնում են ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորի հանձնարարությամբ: ԱԲՀ-ի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների (ֆակուլտետների, ամբիոնների, բաժինների և այլն) գործունեության որակի ապահովման անմիջական պատասխանատուները համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներն են:
- **Ուսանողներ.** մասնակցում են՝
  - ՈԱ գործընթացներին՝ որպես շահակիցներ և ինքնակառավարման մարմինների (ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություն) ներկայացուցիչներ,

- պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման որակի և վարչական կազմի գործունեության գնահատման գործընթացներում,
- Համալսարանի կողմից առաջարկվող ծառայությունների և առկա ռեսուրսային բազայի որակի գնահատման գործընթացներում,
- ինստիտուցիոնալ կարողությունների և մասնագիտությունների կրթական ծրագրերի ինքնավերլուծության գործընթացներում:

Արտաքին շահակիցներ. ընդգրկվում են՝

- Համալսարանի որակի ներքին ապահովման գործընթացներում,
- ՄԿԾ-ների մշակման և վերանայման գործընթացներում,
- Համալսարանի ուսումնական միջավայրի գնահատման գործընթացներում,
- ինստիտուցիոնալ կարողությունների և ՄԿԾ-ների ինքնավերլուծության խմբերի աշխատանքներում,
- շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացներում:

2.2. ՈՆԱ հիմնական գործընթացները, ընթացակարգերը, մեխանիզմները

Կրթական ծրագրերի որակի ապահովում. այն ներառում է՝

- ծրագրերի պլանավորում և մշակման արտոնում,
- ծրագրերի մշակում և հաստատում,
- ծրագրերի իրականացման վերահսկում (մոնիտորինգ),
- ծրագրերի գնահատում և պարբերական վերանայում:

Ուսանողների կրթական արդյունքների գնահատում.

- դասընթացների/ուսումնական մոդուլների յուրացման արդյունքների գնահատում,
- ծրագրի ընդհանուր կրթական արդյունքների գնահատում:

Դասախոսական կազմի գործունեության որակի ապահովում.

- դասավանդման և ուսումնառության գնահատման գործընթացներ,
- դասախոսների վերապատրաստում և կատարելագործում,
- դասախոսական պաշտոնների տեղակալման, տարակարգերում առաջքաշման և նյութական խրախուսման գործընթացներ:

Ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների ՈԱ.

- կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնառության ռեսուրսների (գրադարանի, ընթերցասրահների, համակարգչային լսարաններից օգտվելու հնարավորությունների, համացանցի մատչելիության, լսարանների և ուսումնական

լաբորատորիաների կահավորանքի, խորհրդատվական այլ ծառայությունների և այլն) որակական և քանակական բնութագրերի համապատասխանության գնահատում,
- ուսանողական համակազմի կրթական և անհատական կարիքների գնահատման գործընթացի իրականացում,
- օժանդակ ծառայությունների որակից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցումների իրականացում:

■ **Գիտահետազոտական գործունեության գնահատում.**
- հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվը,
- ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում,
- գիտական հրատարակությունների թիվը:

■ **Հանրային ներգրավման գնահատում.**
- Համալսարանի վերաբերյալ հրատարակվող նյութերի քանակը և ծավալը,
- Համալսարանի վերաբերյալ տեղեկատվության տարածման օպերատիվությունը,
- Համալսարանի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրության արդյունքները:

ՈՆԱՀ ընթացակարգերը

ՈՆԱ համակարգի ներդրումը ներառում է հետևյալ ընթացակարգերի կազմակերպումն ու իրականացումը՝

1. գործող որակի ապահովման համակարգի վիճակի գնահատում,
2. ՈԱ ձեռնարկի մշակում,
3. ՈԱ համակարգի փաստաթղթային բազայի վերլուծություն և արդիականացում,
4. Համալսարանի անձնակազմին ՈԱ համակարգին ծանոթացում,
5. որակի մոնիթորինգի, գնահատման մեխանիզմների բացահայտում և ներդրում,
6. շահակիցների կարծիքի ուսումնասիրություն հարցումների միջոցով,
7. Համալսարանի ինքնագնահատման արդյունքների վերլուծություն,
8. Համալսարանի զարգացման ռազմավարական պլանի իստակեցում,
9. գործող որակի համակարգի կատարելագործում:

Որակի ապահովման մեխանիզմները

Ներքին որակի ապահովման մեխանիզմներն ընդհանուր են և շարունակական: Այդ մեխանիզմները ներառում են հետևյալ բնագավառները՝

- ստորաբաժանումների ինքնագնահատում (ուսանողների առաջադիմությունը, դուրս մնացողների թիվը, պատճառը, ուսանողների ներհոսքը և արտահոսքը, պրոֆեսորա-դասախոսական կազմի քանակը, ժողովածուների հրատարակումը, դասընթացների դիտարկումները, բյուջեի հատկացումները և այլ տվյալներ ստորաբաժանումների կատարողականի հիմնական ցուցիչներն են),
- լավագույն փորձերի բենչմարքինգ (օրինակ՝ ՄՌԿ բենչմարքինգի դեպքում ուսում-նասիրվում են առաջավոր կազմակերպությունների մարդկային ռեսուրսների զարգաց-ման ռազմավարության իրականացման և այդ գործընթացի արդյունավետության համար կիրառվող մեխանիզմները, վերապատրաստումների և զարգացումների ապահովումը, այդ գործընթացների արդյունավետության վերանայումը և այլն),
- ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապ (տվյալների հավաքագրում հետադարձ կապի, հանդիպումների, հարցաթերթերի, անհատական հարցազրույցների, ֆոկուս խմբերի միջոցով):

2.3. ԱԲՀ-ում որակի ապահովման համակարգի ներկա վիճակի համառոտ նկարագիրը

ԱԲՀ-ի ՈԱ համակարգը բուհի գործունեության բոլոր ոլորտներին (կրթություն, գիտություն և հանրային ծառայություններ) վերաբերող գործընթացների պլանավորման, մշտադիտարկման, խնդիրների վերհանման, բարելավումների իրականացման գործընթացների ամբողջություն է:

Համալսարանի կրթության ներքին որակի ապահովման համակարգը կանոնակարգված է, սահմանված են պատասխանատուների պարտականություններն ու իրավասությունները: Համալսարանում բոլոր գործընթացները կանոնակարգող փաստաթղթերը՝ կանոնակարգերը և ընթացակարգերը, հաշվետվությունները, վերլուծությունները հասանելի են շահակիցներին թղթային և/կամ էլեկտրոնային տարբերակներով:

Կրթական գործընթացի բոլոր բաղադրիչների որակի ապահովման և կառավարման նպատակով մշակվել, հաստատվել, լրամշակվել են մի շարք կանոնակարգեր, որոնք տեղադրվել են բուհի պաշտոնական կայքում՝ www.utm.am:

Համալսարանի որակի ապահովման գործընթացներին ակտիվորեն մասնակցում են ներքին շահակիցները: Վերջին տարիներին հետևողական աշխատանքներ են տարվում ՄԿԾ-ների որակի բարելավման ուղղությամբ. այն ներառում է ուսանողների, շրջանավարտների, դասախոսների շրջանում անանուն հարցումների անցկացումը, վերլուծական զեկույց-

ները, ամբիոնների գործունեության ուսումնասիրությունները, ատեստավորող հանձնաժողովների հաշվետվությունները, ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ քննարկումների արդյունքները, կրթական ծրագրերի վերաբերյալ արտաքին և ներքին շահակիցների կարծիքների ուսումնասիրությունները, դրանց համադրման ճանապարհով իրականացված գործողությունները և այլն:

Ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման նպատակով մշակվել և կիրառվում են ուսանողների, թիրախային այլ խմբերի շրջանում հարցումների անցկացման կարգեր, հարցաթերթիկներ: Կարծիքները հավաքագրվում և մշակվում են համալսարանի որակի ապահովման պատասխանատուների կողմից: Տարբեր հարցաթերթիկների միջոցով անցկացվում են ինչպես թղթային, այնպես էլ առցանց հարցումներ: Վերջինս հնարավորություն է ընձեռում բարձրացնելու գործընթացի, արդյունքների ամփոփման օպերատիվությունը, ինչպես նաև թույլ է տալիս խնայելու ժամանակը և այլ ռեսուրսներ: Հարցման արդյունքներն ամփոփվում և ներկայացվում են ԱԲՀ-ի գիտխորհրդի քննարկմանը, գիտխորհրդի կողմից համապատասխան ենթակառուցվածքային ստորաբաժանումներին տրվում են հանձնարարականներ՝ քննարկելու որակի ապահովման այս կամ այն գործընթացը, լուծելու վերհանված խնդիրները, ներկայացնելու բարելավման ուղիներ՝ ըստ համապատասխան ցուցանիշների: Ընթացիկ ուստարվա ընթացքում բացահայտված և հիմնավորված առաջարկությունները հաշվի են առնվում հաջորդ ուսումնական տարվա գործընթացները պլանավորելիս: Ուսումնական գործընթացի որակը բարելավելիս հաշվի են առնվում ուսանողների, գործատուների, պրակտիկաների ղեկավարների, ատեստավորող հանձնաժողովի նախագահների և անդամների առաջարկությունները, դիտողություններն ու նկատառումները, առաջավոր բուհերի նմանատիպ ծրագրերի վերջնարդյունքների համադրական վերլուծության (բենչմարքինգի) արդյունքները:

ԱԲՀ-ում առաջնահերթ են համարվում նաև ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացները: Գնահատման օբյեկտիվությունն ապահովելու նպատակով ներդրվել և կիրառվում են հետևյալ կանոնակարգող փաստաթղթերը՝ «Գիտելիքների ստուգման և գնահատման կարգը», «Ակադեմիական ազնվության կանոնակարգը», «Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգը» և այլն:

Շարունակվում է «Կրեդիտային համակարգ» էլեկտրոնային ծրագրի կիրառումը, որը ոչ միայն մատչելի է դարձնում ուսումնական գործընթացին առնչվող տվյալների մեծածավալ բազան, (ներառում է ուսպլանները, ուսանողների, շրջանավարտների անձնական տվյալները, առաջադիմությունը, ստուգարքային և քննական տեղեկագրերը, ակադեմիական տեղեկագրերը), այլև ապահովում է օբյեկտիվ և թափանցիկ գործընթաց: Կիսամյակից կիսամյակ ծրագիրը համալրվում է ուսանողների գնահատականներով՝ կիսամյակային, տարեկան, արդյունարար ՄՈԳ-ի ավտոմատ հաշվարկով, իսկ տվյալներն օգտագործվում են ուսման վարձերի զեղչման, ակադեմիական տեղեկագրերի տրամադրման ժամանակ:

Դասախոսական կազմի մանկավարժական որակների բարձրացման, առաջավոր փորձի փոխանակման, լավագույն փորձի տարածման նպատակով պարբերաբար կազմակերպվում են սեմինարներ, խորհրդատվություններ, վերապատրաստումներ նոր կրթական տեխնոլոգիաների, առցանց ուսուցման, դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդների և այլ ուղղություններով:

Նախատեսվում է ակտիվացնել կրթության կառավարման գործում Համալսարանի վարչական անձնակազմի ունեցած հմտությունները՝ կրթության կազմակերպման գործընթացների, ուսումնաօժանդակ ծառայությունների, Համալսարանի հասարակական պատասխանատվության, ակադեմիական միջավայրի գնահատման, ներքին և արտաքին գնահատման արդյունքում վերհանված խնդիրների շուրջ արդյունավետ լուծումների որոնման և այլ թեմաներով: Որակի ներքին ապահովման գործընթացների կազմակերպման նպատակով Համալսարանը տրամադրում է անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներ:

Համալսարանում իրականացվող գործընթացների որակի վերաբերյալ հանրությանը լիարժեք և պատշաճ ձևով իրազեկելու համար ԱԲՀ-ն համացանցային տիրույթում ներկայացված է պաշտոնական (www.utm.am) կայքի, facebook սոցիալական ցանցերի միջոցով: Հաշվի առնելով սոցիալական ցանցերի հանդեպ մեծ հետաքրքրությունն ու բազմակիրառելիությունը՝ անհրաժեշտ է ապահովել բուհի ներկայանալու խնդիրն այլ ցանցերում և տիրույթներում ևս:

ԱԲՀ-ն ապահովում է մշտական մասնակցություն ինչպես ՀՀ, այնպես էլ արտերկրի գործընկեր բուհերում կազմակերպվող տարբեր սեմինարների, գիտաժողովների՝ նվիրված բարձրագույն կրթության ոլորտի բարեփոխումներին:

Որակի ապահովման համակարգի դերակատարումն աստիճանաբար աճում է, քանի որ ներքին և արտաքին միջավայրերի պարբերաբար վերլուծություններ են իրականացվում՝ հավաստի տվյալների վրա որոշումների կայացման համար:

Աշխատանքներ են տարվում Համալսարանի կրթության որակի կառավարման կառուցակարգերի բարելավման նպատակով:

2.4. Որակի ապահովման կառավարում

Կրթական հաստատության և նրա բոլոր գործընթացների որակը շարունակաբար բարելավելու հիմքում ընկած է գործընթացների պարբերաբար բարելավման Դեմինգի հանրահայտ **Պ-Ի-Գ-Բ** շրջափուլը, որի հիմնական քայլերն են՝

- **Պ (պլանավորում).** այս փուլում, հիմնականում, իրականացվում է գործընթացների պլանավորում, հիմնվելով այն տվյալների վրա,

որոնք հավաքվել են խնդիրները վերհանելու և դրանց հնարավոր լուծումներ տալու նպատակով:

- **Ի (իրականացում).** այս փուլում, հիմնականում, իրականացնում են նախանշված պլանները. սովորաբար բոլոր մշակումները նախնական փորձարկվում են:
- **Գ (գնահատում).** այս փուլում գնահատվում և վերլուծվում է իրականացված գործընթացների որակը, ինչպես նաև ստուգվում են արդյունքների համապատասխանությունը նախանշված նպատակներին և իրական ձեռքբերումները: Անհրաժեշտության դեպքում, կատարվում են համապատասխան լրամշակումներ:
- **Բ (բարելավում).** այս փուլում «գնահատման» փուլի արդյունքների հիման վրա կատարվում են բարելավմանը միտված մշակումներ և համապատասխան պլանավորում:

Որակի կառավարման մոտեցումները

Մասնագիտական կրթության համակարգում որակի կառավարման առավել ընդունելի տարբերակը «ներդրում-գործընթաց-վերջնարդյունք-բարելավում» մոտեցումն է (սխեմա 1):

«Ներդրումներ» դաշտը հիմնականում շեշտադրում է կրթական գործընթացի կազմակերպումը, քաղաքականությունը, ընթացակարգերը, ռազմավարական պլանում դրված խնդիրներին հասնելու համար ռեսուրսները և անձնակազմի ներուժը, ինչպես նաև գործընթացի արդյունավետ կառավարումը երաշխավորող որակի ապահովման մեխանիզմները:

«Գործընթացներ» դաշտը շեշտադրում է կրթական գործընթացները, մասնավորապես այն գործողությունները, որոնք ուղղված են ռազմավարության, պլանավորման և ուղղորդող ընթացակարգերի իրականացմանը: Հատկապես կարևոր է նախանշված խնդիրների իրականացման գործում ներգրավված անձնակազմի ներուժը: Այս հատվածում ինքնագնահատման համար պատասխանատու որակի ապահովման անձնակազմը պետք է վերլուծի այն քայլերը, որոնք ձեռնարկված են նպատակներին հասնելու համար:

«Վերջնարդյունքներ» դաշտը նախանշում է այն քանակական և որակական ցուցիչները, որոնք սահմանում են, թե իրագործվա՞ծ են արդյոք մասնագիտության կրթական ծրագրի կամ հաստատության նպատակները:

«Բարելավում» դաշտում կատարվում են պլանների վերանայումներ, շտկումներ և/կամ վերամշակում: Եթե ՄՈՒՀ-ը չի հասել իր սահմանած նպատակներին, ապա այս փուլում այն պետք է ձեռնարկի բարելավմանն ուղղված համապատասխան միջոցառումներ, որոնք պետք է ներառվեն բարելավման ծրագրերում:

Համոզվելու համար, որ գործընթացներն իրականացվում են պատշաճ կերպով, կարևոր է դիտարկել տվյալ գործընթացներն ապահովող ներդրումները: Հաստատության զարգացման դինամիկան հասկանալու համար անհրաժեշտ են խորքային վերլուծություններ ինչպես վերջնարդյունքների, այնպես էլ գործընթացների մակարդակներում:

Որակի կառավարման և չափման գործիքներ ու մեթոդներ

Որակի կառավարումը գիտակցված և պլանավորված գործընթաց է, որի իրականացումը ենթադրում է որակական և քանակական գործիքների կիրառում[1]: Դրանցից են՝

- գործընթացի բլոկ սխեմաներ,
- գրաֆիկներ,
- Պարետոյի վերլուծություն,
- վերլուծության տարրերի վերհանման դիագրամ (fish-bone diagram),
- կետային դիագրամներ,
- գնահատման թերթիկներ,
- վերահսկիչ գրաֆիկ (control charts),
- մտագրոհ,
- բենչմարքինգ,
- ՈՒԹՀՎ (SWOT) վերլուծություն:

[1] Նշված գործիքներն ու մեթոդները մանրամասն ներկայացված են Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման ուղեցույցում

2.5. Որակի մշակույթը

Համալսարանի կրթության որակի ներքին ապահովման գործընթացները նպատակաուղղված են որակի մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը: Յուրաքանչյուր ստորաբաժանում և յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում իր կատարած աշխատանքի որակի համար: Որակի մշակույթի ձևավորումը ներառում է.

- գործընթացների իրականացում՝ հիմնված ՊԻԳԲ կառավարման սկզբունքի վրա,
- առաքելության ու գերակա նպատակների իրականացում,
- խնդիրների լուծման համար հավաստի տեղեկատվության վրա հիմնված համապատասխան գործողությունների ձեռնարկում,
- կանոնակարգային գործունեություն՝ հստակ ընթացակարգերով և դրանց հետևողական կիրառմամբ,
- գործընթացների, խնդիրների և լուծումների ձևավորում SMART սկզբունքով, այսինքն՝ որոշակիություն (S), չափելիություն (M), հասանելիություն (A), իրագործելիություն (R), որոշակի ժամանակահատվածի համար կանխորոշվածություն (T),
- կարողությունների պարբերաբար ինքնավերլուծության իրականացում,
- աշխատանքում բարձր պատասխանատվության դրսևորում,
- ուսանողակենտրոն սկզբունքի արմատավորում,
- շահակիցների բավարարվածություն մատուցվող կրթական ծրագրերից և ծառայություններից,
- լավագույն փորձի բացահայտում և տարածում:

2.6. Որակի ներքուհական ապահովման չափորոշիչները և ուղենիշները

Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների հիման վրա սահմանվել են ներքուհական հետևյալ չափորոշիչները՝

1. Կրթության որակի ապահովման քաղաքականություն
2. Կրթական ծրագրերի մշակում և հաստատում
3. Դիմորդների ընդունելություն, առաջադիմություն, որակավորումների շնորհում
4. Ուսանողակենտրոն ուսուցում, դասավանդում, գնահատում
5. Պրոֆեսորադասախոսական անձնակազմ
6. Ուսումնառության ռեսուրսներ և աջակցություն ուսանողներին
7. Գիտահետազոտական գործունեություն
8. Տեղեկատվության կառավարում
9. Հասարակական պատասխանատվություն, հրապարակայնություն և հաշվետվողականություն

10. Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկում և պարբերական վերանայում
11. Որակի արտաքին գնահատում

2.6.1. Կրթության որակի ապահովման քաղաքականություն

Համալսարանի որակի ապահովման քաղաքականությունը մատչելի է ներքին և արտաքին շահակիցներին և կազմում է նրա ռազմավարական կառավարման մաս:

Որակի ապահովման համակարգի քաղաքականությունը և գործընթացները, որոնք ներկայացնում են բարելավման և կատարելագործման շրջափուլ, նպաստում են հաստատության հաշվետվողականությանը, զարգացմանը, կրթական միջավայրի, որակի մշակույթի ձևավորմանը, որտեղ բոլոր շահակիցները մասնակցում և պատասխանատվություն են կրում որակի ապահովման համար:

Որակի ապահովման քաղաքականությունն արդյունավետ է, եթե այն գործնականում իրացնում է կապը դասավանդման, ուսումնառության և գիտահետազոտության միջև, հաշվի է առնում ռազմավարական մոտեցումները և աջակցում.

- որակի ապահովման համակարգի ձևավորմանը,
- կառուցվածքային ստորաբաժանումներին, հաստատության վարչակազմին և ուսանողությանը, որոնք կատարում են իրենց պարտականությունները որակի ապահովման բնագավառում,
- ակադեմիական ազնվությանը, ազատությանը,
- արտաքին շահակիցների մասնակցությանը որակի ապահովման գործընթացներում:

2.6.2. Կրթական ծրագրերի մշակում և հաստատում

Համալսարանն ունի կրթական ծրագրերի մշակման և հաստատման ընթացակարգ՝ սահմանված նպատակներին և ակնկալվող արդյունքներին համապատասխան: Ծրագրի յուրացման արդյունքում շնորհվող որակավորումը հստակ որոշված է ՀՀ ՈԱԱՇ-ի և ԵԲԿՏ-ի որակավորումների կառուցվածքին համապատասխան:

Կրթական ծրագրերի իրականացումը բուհերի առաքելությունն է, որն ուսանողներին ապահովում է ինչպես ակադեմիական գիտելիքներով, այնպես էլ անհրաժեշտ կարողություններով ու հմտություններով, նպաստում անձի զարգացմանը և կիրառվում ապագա կարիերայում:

Կրթական ծրագրերը մշակվում են բուհի ինստիտուցիոնալ նպատակներին համապատասխան և արտահայտում են ուսուցման հստակ վերջնարդյունքներ, ինչպես նաև՝

- որոշում են ուսանողների ծանրաբեռնվածությունը՝ ըստ ESG-ի,
- ներառում են ուսանողների պրակտիկայի անցկացման բնույթը և տեղը,
- մշակվում են ուսանողների և շահակիցների մասնակցությամբ,

- ենթարկվում են արտաքին փորձաքննության, ապահովված են տեղեկատվական ռեսուրսներով,
- քննարկվում, հաստատվում են համապատասխան վարչական օղակներում և ստանում պաշտոնական փաստաթղթի կարգավիճակ:

Ցանկացած ՄԿԾ-ի և դասընթացի մշակում և գնահատում պետք է իրականացվի ըստ նախատեսված կրթական վերջնարդյունքի: Ավելին, տվյալ ՄԿԾ-ն իրականացնելու համար բոլոր ներդրումները (ուսուցման և ուսումնառության մեթոդներ, գնահատման մեթոդներ, դասախոսական կազմ և ուսուցման արդյունքներ) նույնպես պետք է պլանավորվեն և գնահատվեն՝ հիմք ընդունելով կրթական վերջնարդյունքները:

Նախանշված կրթական վերջնարդյունքները սահմանում են, թե կրթական գործընթացի ավարտին ուսանողն ինչ պետք է իմանա, հասկանա և կարողանա ցուցաբերել:

Ձեռքբերված կրթական վերջնարդյունքները ցույց են տալիս, թե նախանշված կրթական վերջնարդյունքների համեմատ, ինչ են ձեռք բերել ուսանողները ՄԿԾ-ի ավարտին:

ՄԿԾ-ն գնահատելու չափանիշների և չափորոշիչների հիմքում պետք է ընկած լինեն ուսանողի կողմից նախանշված վերջնարդյունքների ձեռքբերումը: Ավելին, յուրաքանչյուր վերջնարդյունքի համար պետք է հստակ սահմանել դասավանդման, ուսումնառության և գնահատման համապատասխան մեթոդներ:

Կրթական վերջնարդյունքները պետք է սահմանվեն յուրաքանչյուր ՄԿԾ-ի և դասընթացի համար, և ՄԿԾ ներում սահմանված վերջնարդյունքները պետք է համապատասխանացվեն որակավորումների ազգային շրջանակներին (ՈԱՇ): Կրթական վերջնարդյունքները պետք է լինեն պարզ, հստակ նկարագրված և չափելի:

Բուհն իրականացնում է կրթական ծրագրի բովանդակության վերաբերյալ աշխատաշուկայի ուսումնասիրություններ և, քանի որ սպառողներն ու գիտելիքների կրողներն ուսանողներն են, հետևաբար՝ ուսանողների մասնակցությունը ՄԿԾ-ների բովանդակության մշակմանը, անհրաժեշտություն է:

ՄԿԾ-ների նախագծման գործընթացում օգտագործվում են ուսանողների և գործատուների մասնակցության որոշ ձևեր.

1. **Շրջանավարտների կրթական ծրագրից բավարարվածության հարցումները**, որոնք իրականացվում են ուսումնական տարվա ավարտին: Արդյունքներն օգտագործվում են կրթական ծրագրերի վերանայման նպատակով:

2. **Գործատուների հարցումները**, որոնք հնարավորություն են տալիս կրթական ծրագրերը հնարավորինս մոտեցնել աշխատաշուկայի պահանջներին՝ կարևորելով հմտությունների ուսուցումն ու փոխանցումը աշխատանքային միջավայրում:

3. **Կլոր սեղան-քննարկումներ կամ բուհ-գործատու աշխատաժողովներ,** երբ մասնակիցները հանդես են գալիս այսօրվա աշխատաշուկայի և բուհերի փոխհարաբերությունների

վերաբերյալ զեկույցներով: Բուռն քննարկումները, կարծիքների, փորձի փոխանակումը հնարավորություն են ընձեռում կրթական ծրագրերը հնարավորինս մոտեցնել աշխատաշուկայի պահանջներին:

Այսօր ամբողջ աշխարհում շրջանառության մեջ է դրվել մի նոր եզրույթ՝ ուսանողների *զբաղվածունակություն*: Դա ուսանողի կամ շրջանավարտի սկզբնական աշխատանք ձեռքբերելու և հետագայում աշխատաշուկայում տեղաշարժվելու ունակությունն է: Այսօր բուհի դերն էլ է փոքր-ինչ փոխվել. այն պետք է ոչ միայն խորը մասնագիտական գիտելիքներ տա, այլև օժտի զբաղվածունակության ընդհանուր հմտություններով:

Մասնակցության այս ձևերը հնարավորություն են տալիս ձևավորել կրթական ծրագրի մասնագիտական, ընդհանրական կոմպետենցիաները:

2.6.3.Դիմորդների ընդունելություն, առաջադիմություն, որակավորումների շնորհավորում

Ուսումնական հաստատությունները միատեսակ են կիրառում նախապես որոշված և հրապարակված կանոնները, որոնք ընդգրկում են հետևյալ փուլերը՝ ընդունելություն, ճանաչում և որակավորում:

Ուսանողների ընդունելության չափանիշները և գործընթացը պետք է լինեն միատեսակ և թափանցիկ, որից հետո ուսանողների համար կստեղծվեն բուհին և կրթական ծրագրերին համակերպվելու հնարավորություն: Ուսումնական հաստատությունը ուսանողների առաջադիմության վերաբերյալ տեղեկատվության հիման վրա պետք է ներդնի գործընթացներ և գործիքներ մշտադիտարկման և հետագա գործողությունների համար:

Ավարտական փուլում ուսանողները ստանում են որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ ներառյալ ձեռքբերած արդյունքները, բովանդակությունը, մակարդակը, կրթության կարգավիճակը:

Կրթության միջազգային դասակարգիչներին համապատասխան՝ մշակվել և 2014 թ. Կառավարության կողմից հաստատվել է ՀՀ բարձրագույն կրթության մասնագիտությունների և որակավորումների նոր ցանկը՝ հնարավորություն ընձեռելով բարձրացնելու ՀՀ-ում շնորհված որակավորումների միջազգային համադրելիության և ճանաչելիության աստիճանը:

Բարձրագույն կրթության ճանաչումը ուսանողների առաջադիմության առաջընթացի անբաժանելի բաղադրիչն է և նպաստում է նրանց շարժունության զարգացմանը: Ճանաչման ընթացակարգը հիմնված է ճանաչման ինստիտուցիոնալ պրակտիկայի վրա՝ Լիսաբոնյան կոնվենցիային համապատասխան, ուսումնական այլ հաստատությունների, որակի ապահովման գործակալությունների և երկրի ներսում որակավորումների համաձայնեցված ճանաչման ENIC/NARIC ազգային կենտրոնների հետ համագործակցության միջոցով:

2.6.4. Ուսանողակենտրոն ուսուցում, դասավանդում և գնահատում

Բուհն ապահովում է կրթական այնպիսի ծրագրերի մշակում, որոնք ուսանողներին մղում են ակտիվ դերակատարման ուսումնական գործընթացում, իսկ նրանց առաջադիմության գնահատումը արտահայտում է այդ մոտեցումը:

Ուսանողակենտրոն ուսուցումը և դասավանդումը կարևոր դեր են խաղում ուսումնական գործընթացում ուսանողների մոտիվացիայի, ինքնաարտահայտման և մասնակցության համար, որը պահանջում է ուսումնական ծրագրերի մշակման, դասավանդման, ինչպես նաև ուսուցման արդյունքների գնահատման նկատմամբ հավասարակշռված մոտեցում: Այն ենթադրում է.

- ավելի շատ ակտիվ, ոչ պասիվ ուսուցում,
- ուշադրություն առավել խորը ուսուցմանն ու ըմբռնմանը, ուսանողների կարիքների վերհանում, ուսուցման տարբեր ձևերի կիրառում,
- ուսանողի կողմից պատասխանատվության և հաշվետվողականության բարձրացում,
- ուսումնառողի ինքնավարության զգացումի խրախուսում և միաժամանակ դասախոսի կողմից անհրաժեշտ աջակցություն,
- համագործակցություն դասավանդողի և ուսումնառողի միջև,
- փոխադարձ հարգանք դասախոս-ուսանող փոխհարաբերություններում,
- ուսանողների բողոքների քննարկման ընթացակարգի առկայություն:

Ուսանողակենտրոն կրթությունը բնութագրվում է ուսուցման նորարարական մեթոդներով, որոնց նպատակն է ուսուցման գործընթացում դասավանդողների և ուսումնառողների միջև կապի խթանումը, ուսանողներին իրենց սեփական ուսուցմանն ակտիվ մասնակիցներ դարձնելը, այնպիսի փոխանցելի հմտությունների խթանումը, ինչպիսիք են խնդիրների լուծումը, քննադատական մտածողությունը և ռեֆլեկտիվ մտածողությունը: Այն ապահովում է նաև հմտություններ կյանքի համար: Ուսանողակենտրոն դասավանդման ժամանակ դասավանդողը հանդես է գալիս որպես ուղղորդող, միջնորդ, քան որպես հրահանգիչ:

Ուսանողակենտրոն ուսուցման սկզբունքները

Սկզբունքներ	Նկարագրություն
Պահանջում է անընդհատ ռեֆլեկտիվ գործընթաց	Դասախոսները, ուսանողները և հաստատությունները պետք է շարունակաբար կատարելագործեն դասավանդման, ուսուցման և ինստիտուցիոնալ համակարգերն այնպես, որ կարողանան անընդհատ բարելավել ուսանողների ակնկալվող ուսումնառության արդյունքների ձեռքբերումը:
Ուսանողներն ունեն ուսուցման տարբեր ոճեր	Ուսանողներն ունեն մանկավարժական տարբեր մոտեցման կարիք: Ոմանք լավ են սովորում փորձի ու սխալվելու ճանապարհով, մյուսները՝ գործնական փորձի հիման վրա, որոշ ուսանողներ սովորում են գրականություն կարդալով, մյուսները պետք է անպայման քննարկեն տեսությունը, որպեսզի այն հասկանան:
Ուսանողներն ունեն տարբեր բազային գիտելիքներ և ուսուցման տարբեր փորձ	Ուսուցումը պետք է համապատասխանի անհատի կյանքի և մասնագիտական փորձին: Օրինակ, եթե ուսանողներն արդեն իսկ ունեն տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման զգալի փորձ, ապա անիմաստ է նրանց փորձել կրկին սովորեցնել նույն բանը: Անձնական փորձը կարող է օգտագործվել ուսանողներին մոտիվացնելու համար:
Ուսանողներն ունեն տարբեր հետաքրքրություններ և կարիքներ	Ուսանողներն ունեն առարկայական ծրագրից դուրս պահանջներ, խնդիրներ: Նրանցից շատերը դասերից զատ զբաղվում են սպորտով, տարբեր ակումբների անդամներ են: Նրանք կարող են ունենալ երեխաներ, բախվել հոգեբանական խնդիրների, հաշմանդամության, հիվանդանալ: Ուսումնական գործընթացը նախագծելիս անհրաժեշտ է հաշվի առնել այս պահանջները:
Չկա մեկ միասնական մոտեցում կամ ձևաչափ, որն ընդհանուր լինի բոլոր դեպքերի համար	Ուսանողակենտրոն ուսուցման հիմքում ընկած է այն գիտակցումը, որ բոլոր բուհերը, դասախոսները, ուսանողները տարբեր են: Նրանք աշխատում են բազմազան հանգամանքներում՝ տարբեր առարկայական դասընթացներով: Հետևաբար, ուսանողակենտրոն ուսուցումը պահանջում է անհատական ծրագրով ուսուցում՝ ուսանողների առանձնահատկություններին համապատասխան:
Ուսանողները հնարավորություն են ունենում վերահսկելու իրենց ուսուցումը	Ուսանողները, որպես ակտիվ գործընկերներ, պետք է հնարավորություն ունենան մասնակցելու դասընթացների, ուսումնական ծրագրերի, դրանց գնահատման մեխանիզմների մշակման գործընթացներին:
ՈՒԿՈ-ն ավելի շուտ «հնարավորություն է» և ոչ թե «տեղեկատվություն»	Ավանդական դասավանդման դեպքում փաստերն ու գիտելիքները փոխանցվում են հիմնականում դասավանդողից: ՈՒԿՈ մոտեցումը ուսանողին տալիս է ավելի մեծ պատասխանատվություն՝ հնարավորություն տալով ուսանողին մտածել, վերլուծել, սինթեզել, քննադատել, կիրառել, լուծել խնդիրները և այլն:
ՈՒԿՈ-ի արդյունավետության տեսանկյունից կարևոր դեր ունի ընտրությունը	Ուսանողների հետաքրքրությունը կարող է լինել բազմազան, սակայն ցանկացած առաջարկ պետք է ներառի ողջամիտ ընտրության հնարավորություն (ուսուցման մեթոդի, գնահատման և այլ):
ՈՒԿՈ ուսուցումը պահանջում է դասախոսների և ուսանողների համագործակցություն	Կարևոր է, որպեսզի ուսանողներն ու դասախոսները համագործակցեն ինչպես ուսուցման գործընթացում առաջացող, այնպես էլ որպես նույն բուհի շահակիցների առջև դրված ընդհանուր խնդիրները հասկանալու և շտկելու առումով:

ՈՒԿՈՒ ընդհանուր առավելությունները

Ուսանող	Դասախոս	Ընդհանուր առավելություններ
1. Ուսանողի դերակատարությունն ակադեմիական կառույցներում. ստեղծում է անկախ սովորողներ, արծագանքում նրանց փոփոխվող և տարբեր կարիքներին: Այն հնարավորություն է, որ ուսանողները ձևավորեն իրենց ճանապարհը ողջ կյանքի համար:	**1. Առավել հետաքրքիր դեր դասախոսների համար**. հնարավորություն է տալիս ուսուցումը կազմակերպել տարբեր ձևերով: Աշխատանքային պայմանների բացասական գործոնները՝ կապված սովորելու հետ, նվազում են:	**1.Կրթության որակի ապահովում:**
3.Ինքնուրույնության և պատասխանատվության բարձրացում. ուսանողը դառնում է ավելի անկախ և քուն ավարտելուց հետո կյանքին առավել հարմարվող:	**3. Դրական ազդեցություն աշխատանքի պայմանների վրա:** Դասախոսն ավելի շատ հանդես է գալիս որպես միջնորդ, ոչ թե հրահանգիչ՝ խրախուսելով ուսանողների ինքնուրույն մտածելակերպը, վերլուծական հմտությունները և քննադատական մտածողությունը:	**3. Կառավարման կառույցներում ներկայացվածության բարձրացում:**
4. Ուշադրություն ուսանողների պահանջներին. առավել հետաքրքրվող ուսանողների հետադարձ կապի շնորհիվ աշխատանքների արդյունավետությունը դառնում է չափելի:	**4. Շարունակական ինքնակատարելագործում**. այն հնարավորություն է տալիս դասավանդողներին վերանայել և զարգացնել իրենց դասընթացները ու դասավանդման մեթոդները:	**4. Ուսանողների ներգրավվածության թվի աճ:**
5. Սովորելու մոտիվացիայի բարձրացում:	**5.ՊԴ կազմի մասնագիտական զարգացում.** բարձրացնում է դասախոսների ճկունությունը դասավանդման և ուսումնառության նոր մեթոդների կիրառման ուղղությամբ:	**7. Շարունակական կրթության մշակույթի ձևավորում:**

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսանողները յուրացնում են ավելի շատ տեղեկություններ, եթե ուսուցման մեջ ավելի շատ են ակտիվ ուսուցման և ակտիվ մասնակցության գործոնները: Այսինքն, գիտելիքի յուրացման մակարդակը կախված է ուսուցման նյութի մատուցման եղանակից: Ակտիվ ուսուցման ձևերը ցույց են տալիս պահպանման ավելի բարձր տեմպեր, քան ավանդական ուսուցման ձևերը: Այն բավականին լավ է արտահայտված Անգլիայի ուսուցման լաբորատորիայում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում մշակված ուսուցման բուրգում (գծապատկեր 1):



Աղբյուրը: Անգլիայի ազգային ուսուցման լաբորատորիա, Բեդֆոդ, Մայնե Գծ.1

Դասավանդում, ուսումնառություն և գնահատում

Դասավանդումը, ուսումնառությունն ու գնահատումը դիտարկվում են միասնական տրամաբանության մեջ: Դասավանդումը պետք է ուսանողների համար բավարար պայմաններ ստեղծի ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման համար:

Դասընթացի սկզբին դասախոսը պարտավոր է ուսանողներին ծանոթացնել դասընթացի ավարտին ակնկալվող կրթական վերջնարդյունքներին, դրանց գնահատման ձևերին և ընթացակարգերին:

Դասախոսի ակադեմիական ազատությունը թույլ է տալիս նրան իր հայեցողությամբ ընտրել դասավանդման և գնահատման մեթոդներ: Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության համար կարող ենք հիմք ընդունել հետևյալ սկզբունքները՝

1. *Ուսումնառության և դասավանդման մեթոդները պետք է առավելագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը ուսանողների կողմից:*
2. *Ուսումնառության և դասավանդման մեթոդները պետք է հաշվի առնեն ընդունակությունների տարբեր աստիճաններ ունեցող ուսանողների կարիքները:*
3. *Ուսումնառության և դասավանդման մեթոդները պետք է ընձեռեն խմբակային աշխատանքներ կատարելու հնարավորություն, խթանեն ուսանողների ակտիվությունը և ինքնուրույն գործելակերպը:*
4. *Ուսումնառության և դասավանդման մեթոդները պետք է ապահովեն հետադարձ կապ ուսանողի և դասախոսի միջև:*

Երբ դասավանդումը և ուսումնառությունը պլանավորվում է այս սկզբունքներից ելնելով՝ ուշադրության կենտրոնում է հայտնվում ուսանողը, այլ ոչ թե դասախոսը, և ուսումնառության բովանդակությունը կենտրոնանում է վերջնարդյունքների ձեռքբերման վրա:

Ուսումնառության գնահատումը ԱԲՀ-ում

Ավանդական բժշկության համալսարանն իր առջև դրված խնդիրները լուծելու և նպատակներն իրագործելու ճանապարհին կարևորում է ուսանողների ուսումնառության գնահատումը՝ որպես կրթության կարևոր բաղադրիչ: Համալսարանում ստեղծվել և գործում է ուսանողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների գնահատման համակարգ, որը պարբերաբար բարեփոխվում է, կախված կրթությանը ներկայացվող ժամանակակից պահանջներից: Գնահատման ժամանակ նկատի են առնվում հետևյալ պահանջները.

- ուսումնական գործընթացը կազմակերպել այնպես, որ մատչելի ձևով ապահովվի ուսանողների կողմից կրթական ծրագրերում սահմանված վերջնարդյունքների ձեռքբերումը,
- արդյունավետ ձևով հավաքագրել գնահատմանը վերաբերող տեղեկատվությունը:

Գնահատման համակարգի սկզբունքները

- Կրթական ծրագրով և դասընթացով նախատեսված գիտելիքի, հմտությունների և կարողությունների որակը չափվում է գնահատականներով, իսկ կրեդիտների թիվը կախված է ուսանողի կողմից յուրացման ծավալից:
- Յուրաքանչյուր ծրագիր և դասընթաց պետք է լինի չափելի և ստուգելի:
- Գնահատման համակարգը պետք է հնարավորություն տա հեշտությամբ հաշվարկելու վարկանիշային միավորները և ուսանողի ՄՈԳ-ը ուսումնառության ցանկացած ժամանակահատվածի համար:
- Ուսանողների գիտելիքի գնահատման գործընթացը կատարելագործելու համար անցկացվում են հարցումներ: Արդյունքների վերլուծումից հետո ներկայացվում են առաջարկություններ, որոնց քննարկումից հետո կատարվում են կոնկրետ քայլեր՝ գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

- Համալսարանում գործում է ուսանողների գնահատման բազմաբաղադրիչ համակարգ /տե՛ս համալսարանի պաշտոնական կայքում տեղադրված «ԱԲՀ ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգը»/, որը վերը նշված վերլուծությունների արդյունքում կարող է փոփոխվել:

Բարձրագույն ուսումնական հաստատության կամ ծրագրի որակը որոշվում է՝ համեմատելով ձեռքբերված կրթական վերջնարդյունքները նախանշված կրթական վերջնարդյունքների հետ, որն, իրականում, բացահայտում է ուսանողների ուսումնառության ձեռքբերումը: Վերջնարդյունքների բովանդակությունը պետք է համապատասխանի դասընթացով նախանշված նպատակներին և պետք է լինի ՄԿԾ-ին համապատասխան մակարդակի վրա:



Գծապատկեր 2. Դասավանդման և ուսումնառության գնահատման մոտեցում՝ ըստ կրթական վերջնարդյունքների:

2.6.5.Պրոֆեսորադասախոսական կազմի որակի ապահովում

Համալսարանը վստահ է իր դասախոսների կոմպետենտության մեջ: Աշխատակիցների ընտրության, զարգացման և մասնագիտական աճի գործընթացները արդար են և թափանցիկ:

Համալսարանը պատասխանատվություն է կրում իր աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության և նրանց արդյունավետ աշխատանքի բարենպաստ պայմանների ապահովման համար, ինչը ենթադրում է.

- աշխատակիցների ընտրության և պայմանների ապահովման հստակ և թափանցիկ գործընթացներ, որոնցով կարևորվում է դասախոսական գործունեությունը,
- պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական զարգացման հնարավորությունների առաջարկում,
- ուսուցման և գիտահետազոտության միջև կապի ամրապնդում, այդ ուղղությամբ գործունեության խրախուսում,

- դասավանդման մեթոդներում նորարարությունների և ուսուցման գործընթացում նոր տեխնոլոգիաների ներդրման աջակցում:

Բուհի պրոֆեսորադասախոսական կազմը ընդգրկում է հետևյալ տարակարգերը՝ ***դասախոս, ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր***:

ՊԴ կազմի ձևավորման քաղաքականությունը և ընթացակարգերը հիմնվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքի, «Կրթության մասին», «Բուհական և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների դրույթների վրա:

Համալսարանն ապահովում է աշխատակիցների հաստիքների որակյալ համալրման և նշանակումների գործընթացները, հնարավորություն է ընձեռում դասախոսներին բարձրացնել մասնագիտական որակավորումը և խրախուսում նրանց ինքնակատարելագործումը:

Համալսարանում գործում են կարգեր, կանոնակարգեր և ընթացակարգեր, որոնք նպաստում են անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրությանն ու մասնագիտական զարգացմանը:

Դասախոսական կազմի պլանավորումն ու տարակարգումն իրականացվում են այնպես, որ բոլոր կրթական ծրագրերն ու դասընթացներն ապահովվեն կրթական ծրագրերի իրականացման, թարմացման, շարունակական բարելավման համար բավարար թվով որակյալ դասախոսներով:

Այդ առումով, ընդհանրապես, կարևորվում են հետևյալ հիմնական գործոնները՝

○ Բուհն ունի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման հաստատված կարգ և այն իրականացնելու հստակ գործընթացներ, որոնք ներառում են կադրերի ընտրությունը և պաշտոնակալումը:

○ Բուհի դասախոսական կադրերի մրցութային ընտրությունը, որը համարվում է բարձրորակ կադրեր ներգրավելու կարևոր նախապայման և իրականացվում է պլանավորված հաստիքների պահանջները բավարարող թեկնածուների խմբից՝ սահմանված և նախապես հրապարակված չափանիշների համաձայն:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի որակավորման բարձրացման, մասնագիտական կարողությունների զարգացման համակարգը

Դասախոսների որակավորման բարձրացումը կրթության որակի ապահովման և լրացուցիչ կրթության համակարգի կայացման երաշխիքն է:

Որակավորման բարձրացման կարևորագույն խնդիրներն են՝

- պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտելիքների թարմացում և իմացության խորացում գիտաառարկայական, հոգեբանամանկավարժական և մասնագիտական գործունեության ոլորտում գիտության ժամանակակից նվաճումների, տեխնոլոգիաների հետ ծանոթացումների հիման վրա,

- ուսուցման առաջադեմ մեթոդների, միջոցների և տեխնոլոգիաների տիրապետում, մտահորիզոնի ընդլայնում,
- հայրենական և արտասահմանյան փորձի ուսումնասիրում:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի որակավորման բարձրացումն իրականացվում է բուհի ամբիոններում մշակված տարեկան պլաններին համապատասխան: Որակավորման բարձրացումը պլանավորվում է աշխատանքից կտրված, առանց աշխատանքից կտրվելու, աշխատանքից մասամբ կտրվելով և ուսուցման անհատական ձևով:

Դասախոսների մասնագիտական կայացման և որակավորման բարձրացման պլանը ներառում է.

- մանկավարժության և հոգեբանության հիմունքների և ուսուցման մեթոդների ինքնուրույն ուսումնասիրում,
- հաճախում ամբիոնի առաջատար դասախոսների կողմից անցկացվող ուսումնական պարապմունքներին,
- մասնակցություն ամբիոնի խորհրդակցություններին, ինչպես նաև գիտամեթոդական համաժողովներին,
- մասնակցություն ամբիոնի գիտահետազոտական աշխատանքներին, ուսուցման մեթոդիկային վերաբերող հոդվածների հրատարակում:

Որակավորման անընդմեջ բարձրացումը դասախոսի պարտականությունն է և ամբիոնի կարևորագույն խնդիրը:

Շատ կարևոր է որակավորման բարձրացման, վերապատրաստման դասընթացի ավարտից հետո ձեռքբերված գիտելիքների ու հմտությունների հետագա կիրառության շարունակական գնահատումը: Դասընթացների ավարտին մասնակիցները պետք է հնարավորություն ունենան հարցաթերթերի լրացման կամ այլ միջոցներով համակողմանիորեն գնահատելու իրենց մատուցված նյութի որակը, դրա համապատասխանությունն իրենց կարիքներին, գնահատելու դասավանդման մեթոդները և բազմաթիվ այլ խնդիրներ: Հետադարձ կապի ապահովումը կարևոր է ինչպես ծրագրի ազդեցությունը հասկանալու, այնպես էլ՝ դասախոսներին շարունակական խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու համար: Մյուս կողմից, դասախոսներից ստացված տեղեկատվությունը թույլ կտա վերանայել և բարելավել դասընթացները:

Դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի որակն ու արդյունավետությունը գնահատելու նպատակով անհրաժեշտ է՝

- Կատարել իրականացված ծրագրի արդյունավետության վերլուծություն՝ մի շարք չափանիշների համաձայն (համապատասխանություն կարիքներին, հասցեականություն, դասավանդման մեթոդների նորարարություն, բովանդակության որակ և ակտուալություն, ստացված գիտելիքների կիրառելիություն և այլն):

- Դասախոսների որակավորման բարձրացումը դիտարկել կրթության որակի ապահովման այլ մեխանիզմների ու մոտեցումների լայն համատեքստում:
- Մշակել ինչպես նշված ծրագրի/մեխանիզմի արդյունավետության բարձրացմանն ուղղված, այնպես էլ՝ դասախոսական կազմի որակավորման բարձրացման և կրթության որակի ապահովման առաջարկություններ:

Միայն ծրագրի անմիջական շահակիցներին (դասախոսներին) ներառող մասնակցային գործընթացը կարող է հանգեցնել ծրագրի էական բարելավման, որը հնարավորություն կընձեռի՝

1) **Վերաիմաստավորել դասախոսների որակավորման բարձրացման ծրագրերի փիլիսոփայությունը:** Պետք է գործնականում իրացվի այն սկզբունքը, որ ծրագիրը ոչ թե դասախոսների ստուգման ու վերահսկողության, այլ՝ խորհրդատվության ու կարողությունների զարգացման նպատակ ունի:
2) **Ապահովել Համալսարանի դասախոսների որակավորման բարձրացման ծրագրի մշակման և վերանայման գործընթացներում անմիջական (դասախոսներ) և անուղղակի (ուսանողներ) շահառուների ակտիվ մասնակցությունը:**
   Սա հնարավոր կլինի իրականացնել, եթե գործընթացն ունենա մշակման ներքևից-վերև ուղղություն, այսինքն՝ զարգացման պլանները կազմվեն ամբիոններում և ֆակուլտետներում, այնուհետև՝ ընդգրկվեն բուհական ծրագրում:
3) **Մշակել խրախուսման մեխանիզմներ** (օրինակ՝ աշխատավարձի հավելում, դասախոսական տարակարգերի շնորհման դեպքում՝ միավորների հավելում)՝ դասընթացներին մասնակցությունը խթանելու համար:
4) **Սահմանել ծրագրի շրջանակում դասավանդող դասախոսների ընտրության չափանիշներ և ապահովել դրանց թափանցիկությունը:**

Որակավորման բարձրացման ծրագրի դասընթացները միտված են դասավանդման ժամանակակից մոտեցումների ու մեթոդների ուսուցմանը, հետևաբար, հարկավոր է ապահովել դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառությունը:

2.6.6. Ուսումնառության ռեսուրսներ և աջակցություն ուսանողներին

Համալսարանն ունի բավարար ֆինանսավորում ուսումնական գործընթացին համարժեք ուսումնական ռեսուրսների ապահովման և ուսանողներին աջակցման համար:

Ըստ այդմ, համապատասխան եվրոպական չափորոշիչը առաջարկում է հետևյալ ուղենիշները.

1) Ուսանողները կարիք ունեն ուսումնառությանն օժանդակող մի շարք ռեսուրսների՝ սկսած ֆիզիկական ռեսուրսներից, ինչպես, օրինակ, գրադարանները և համակարգչային տեխնիկան, մինչև զուտ մարդկային աջակցությունը:

2) Ուսումնական ռեսուրսների պլանավորման, բաշխման, տրամադրման և ուսանողներին աջակցման, ինչպես նաև ուսանողակենտրոն ուսուցման ու դասավանդման ժամանակ պետք է հաշվի առնվեն ուսանողների բազմաբնույթ համակազմի պահանջները (օրինակ, տարիքով, աշխատող սովորողներ, սահմանափակ հնարավորություններով ուսանողներ, արտասահմանյան ուսանողներ):
3) Ուսումնառության ռեսուրսները և մյուս օժանդակ ծառայությունները պետք է հեշտությամբ հասանելի լինեն ուսանողներին, կառուցվեն՝ հաշվի առնելով նրանց կարիքները:
4) Բուհերը պետք է մշտապես հսկեն, գնահատեն և բարելավեն նաև իրենց ուսանողների աջակցության ծառայությունների արդյունավետությունը:

Ուսանողների աջակցման պայմանները և միջոցառումները կարող են կազմակերպվել տարբեր ձևերով՝ կախված ինստիտուցիոնալ կոնտեքստից:

Որակի ապահովման ներքին համակարգը երաշխավորում է ռեսուրսների համապատասխանությունն ու մատչելիությունը դրված նպատակներին և ուսանողների տեղեկացվածությունը ծառայությունների մասին:

Ուսանողների աջակցման և ծառայությունների մատուցման գործընթացում վճռական նշանակություն ունի վարչական և տեխնիկական անձնակազմի դերը, ուստի նրանք պետք է ունենան համապատասխան կոմպետենցիաներ և որակավորման շարունակական բարձրացման պայմաններ ու հնարավորություններ: Աջակցման ծառայությունների դերը կարևոր նշանակություն ունի հատկապես ուսանողների շարժունության խթանման համար:

Ուսումնառության կարևորագույն ռեսուրսները կարելի է խմբավորել այսպես՝ **ուսումնական ենթակառուցվածքներ, ուսումնառության տպագիր ռեսուրսներ, էլեկտրոնային ռեսուրսներ, ուսումնառության համացանցային և տեսաձայնային** ռեսուրսներ:

Ուսումնառության ռեսուրսները (գրադարանները, ընթերցասրահները, տեխնոլոգիապես հագեցած, ընդհանուր օգտագործման և մասնագիտացված լսարանները, ուսումնական և հետազոտական լաբորատորիաները, համակարգչային սրահները, ազատ WiFi գոտիները, հեռահաղորդակցության հարթակները, էլեկտրոնային փոստը, ուղեցույցները և այլն) օգնում են ուսանողներին հաջողությամբ ձեռքբերել ծրագրի կամ դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքները, նպաստում են ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացմանը: Ուսումնառության բարձրորակ ռեսուրսներով ապահովումն ու դրանց արդյունավետ օգտագործումը նպաստում է ուսանողների այնպիսի ունակությունների զարգացմանը, ինչպիսիք են կիրառելը, հետազոտելը, կազմակերպելը, վերլուծելը, սինթեզելը, գնահատելը և այլն:

Ռեսուրսների պլանավորումը և կիրառումը: Միայն ուսումնառության ռեսուրսների առկայությունը դեռևս չի նշանակում դասավանդման և ուսումնառության օժանդակում, քանի դեռ այդ ռեսուրսները լիարժեք չեն օգտագործվում ուսանողների և դասախոսների կողմից և դրանց արդյունավետությունը պատշաճ չի գնահատվում: Ուսումնառության ռեսուրսների

պլանավորման համար պետք է գնահատել ուսանողների և դասախոսների կողմից դրանց փաստացի օգտագործման աստիճանը, ինչպես նաև ունենալ ռաումնառության ռեսուրսների պլանավորման կանոնակարգված գործընթաց:

Ռաումնառության ռեսուրսների պլանավորման գործընթացին ներկայացվող հիմնական պահանջները հետևյալն են՝

1) ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների բացահայտումը և գնահատումը, որոնք իրականացվում են կրթական ծրագրերի արտոնման, հաստատման, ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման փուլերում:
2) Ուսանողական համակազմի առանձնահատկությունները հաշվի առնելն ու նրանց կարիքների առավելագույն բավարարումը:
3) Համալսարանում կիրառվող դասավանդման, ռաումնառության և գնահատման ձևերն ու մեթոդները կարևորելը:
4) Ռաումնառության ռեսուրսների կառավարման և տեխնիկական հարցերին ուշադրություն դարձնելը:
5) Ռաումնառության ռեսուրսների հարմարեցումը ուսանողների և դասախոսների կողմից դրանց ինքնուրույն և արդյունավետ օգտագործմանը:

Ռաումնառության ռեսուրսներն ընտրվում, համակարգվում և նախապատրաստվում են կրթական ծրագրերի իրականացմանն արդյունավետ կերպով օժանդակելու համար: Ռաումնառության ռեսուրսների պլանավորումն իրականացվում է թե՛ ինստիտուցիոնալ մակարդակով և թե՛ ուսումնական ստորաբաժանումների կողմից՝ ըստ առանձին կրթական ծրագրերի: Ուսանողները, դասախոսները և վարչակազմը հնարավորություն ունեն մասնակցելու ռաումնառության ռեսուրսների պլանավորման և զարգացման աշխատանքներին:

Ռաումնառության ռեսուրսներին ներկայացվող պահանջները: Ռաումնառության ռեսուրսների շարունակական զարգացման և արդյունավետ օգտագործման համար անհրաժեշտ են վարչական կառույցներ, տեխնիկական ծառայություններ և բավարար թվակազմով ու մասնագիտական կարողություններով օժտված սպասարկող հաստիքակազմ, որին ներկայացվում են հետևյալ հիմնական պահանջները.

- հստակ ներկայացվում են ռաումնառության ռեսուրսների համար պատասխանատու կառույցների և դրանց սպասարկող անձնակազմի որակավորման պահանջներն ու պարտականությունները (աշխատանքային բնութագիր/պաշտոնի անձնագիր),
- ռաումնառության ռեսուրսների սպասարկող անձնակազմին տրամադրվում են մասնագիտական կատարելագործման հնարավորություններ,
- կրթական ծրագրերը մշակելիս համապատասխան ուսումնական ստորաբաժանումը խորհրդակցում է ռաումնառության ռեսուրսների ապահովման և զարգացման համար պատասխանատու կառույցների հետ,

Ուսումնառության ռեսուրսների ու ուսանողների օժանդակության ծառայությունների պահպանման ու զարգացման համար Համալսարանը տրամադրում է բավարար ֆինանսական ու նյութական միջոցներ, ինչպես նաև մարդկային ռեսուրսներ:

Ուսումնառության ռեսուրսների գնահատումը: *Ուսումնառության ռեսուրսների գնահատման հիմնական նպատակն է՝* պարզել, թե որքանով են դրանք նպաստում ուսանողների կողմից կրթական ծրագրերի կամ դասընթացների ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը: Ուսումնառության ռեսուրսների գնահատումը պետք է ներառված լինի բուհի որակի ներքին ապահովման ընդհանուր գործընթացներում:

Ուսումնառության ռեսուրսների գնահատման հիմնական ձևերն են՝

1. **Հարցաթերթիկային հարցումներ**, որոնք կիրառվում են տարբեր թիրախային խմբերի հետ: Գնահատման այս մեթոդը տալիս է ինչպես որակական, այնպես էլ քանակական գնահատականներ, հնարավորություն է տալիս ուսանողին անանուն և անհատական արձագանքների տրամադրմամբ արտահայտել տվյալ ռեսուրսից իր բավարարվածությունը:
2. **Ֆոկուս խմբեր** գնահատման այս մեթոդը հնարավորություն է տալիս պարզելու, թե ուսումնառության ինչպիսի ռեսուրսների կարիք ունի տվյալ թիրախային խումբը, ինչպես կարելի է բարելավել առկա ռեսուրսները, որքանով են դրանք իրականում հասանելի և ինչպես կարող են լավագույն ձևով գործածվել: Այն հնարավորություն է տալիս ստանալու օգտակար տեղեկատվություն թե՛ ռեսուրսների պլանավորման և թե՛ դրանց կիրառման փուլերում:
3. **Հարցազրույցներ**, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ որոշել ուսանողների վարքագիծը որոշակի ոլորտներում, ինչպես օրինակ՝ ուսանողի և ուսումնական ռեսուրսների փոխազդեցությունը, ուսանողների քանի՞ տոկոսն է կիրառում ուսումնառության այս կամ այն ռեսուրսը և դրանով նախատեսված գործընթացները, որո՞նք են բաց թողնվում և որո՞նք են դժվարություններ առաջացնում: Այս մեթոդը մյուսների համեմատ ավելի ժամանակատար է և, ի տարբերություն հարցումների, ուսանողները այդքան էլ հակված չեն ազատորեն արտահայտվել մեկ այլ անձի ներկայությամբ, անգամ եթե հարցազրույցն անանուն է: Ուստի այս մեթոդը նվազ կիրառելի է:

Աջակցություն ուսանողներին: ԱԲՀ-ում կարևորվում են ուսանողների աջակցության ծառայությունները, որոնց նպատակն է օժանդակել ուսանողների համակողմանի զարգացմանը և օգնել նրանց՝ սահմանված ժամկետներում ձեռքբերելու ուսումնական ծրագրով սահմանված կրթական վերջնարդյունքները: Աջակցության ծառայությունները մասնագիտական և վարչական բնույթի ծառայություններ են, որոնք ուղղորդում և աջակցում են ուսանողներին:

Համալսարանը հրատարակում և իր դիմորդներին ու ուսանողներին հասանելի է դարձնում ուղեցույցներ, բուկլետներ, կանոնակարգեր, որոնք ներառում են տեղեկատվություն ԱԲՀ-ի առաքելության, ընդունելության պայմանների և ընթացակարգերի, ուսանողների իրավունքների ու պարտականությունների, կրթական ծրագրերի և դրանց ավարտական պահանջների, ուսման վարձավճարների և դրանց զեղչման ու վճարման կարգի, հաճախումների և բուհից ազատման հետ կապված այլ դրույթների վերաբերյալ: Կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների, ընդունելության մասին դիմորդները տեղեկանում են բուհի պաշտոնական կայքի, ֆեյսբուք սոցիալական ցանցի միջոցով:

ԱԲՀ-ի ուսանողների աջակցության ծառայությունները ներկայացվում են ստորև.

1. Ուսանողների խորհրդատվություն, ուսանողների իրավունքների պաշտպանություն (ուսումնական մաս, դեկանատ, ուսխորհուրդ, կուրսի խորհրդատու, արտաքին կապերի բաժին)
2. Դիմորդների ընդունելության նախապատրաստում (Ուսումնական մաս, Արտաքին կապերի բաժին)
3. Գրադարանային ծառայություններ
4. Սոցիալական, մշակութային և սպորտային ծրագրեր (Ուսխորհուրդ, ՈւԳԸ)
5. Առողջապահական ծառայություններ (Ամբուլատորիա)
6. Անվտանգության ծառայություն
9. Տեղեկատվական ծառայություններ (ԱԲՀ-ի պաշտոնական կայք, ֆեյսբուքյան էջ)
10. Վարչական աջակցություն (կառուցվածքային ստորաբաժանումներ)
11. Սննդի կետ
12. Արտասահմանյան ուսանողների աջակցման, ադապտացման ծրագրեր՝ ժամանակավոր կացության քարտերի ձեռքբերում, ուսանողների կեցության ապահովում՝ ըստ անհրաժեշտության և այլն (Արտաքին կապերի բաժին):

Ուսանողների աջակցության ծառայությունների պլանավորումը: Համալսարանը պետք է համակարգված ձևով բացահայտի իր ուսանողական համակազմի կրթական և անհատական կարիքները, պլանավորի և ձեռնարկի համապատասխան միջոցառումներ՝ այդ կարիքները հոգալու համար, ուշադրության կենտրոնում պահելով ուսանողների կրթական նպատակների իրագործմանն օժանդակելը:

Ուսանողների աջակցության ծառայություններին ներկայացվող պահանջները: Ուսանողների աջակցության ծառայությունները և ծրագրերը պետք է լինեն կանոնակարգված: Համալսարանը պարբերաբար և կանոնավոր կերպով պետք է գնահատի ուսանողների աջակցության ծառայությունների արդյունավետությունը, դրանց համապատասխանությունը և համարժեքությունը կրթական ծրագրերի պահանջներին և ուսումնառության ձևերին՝ այդ ծառայությունների հետագա բարելավման և կատարելագործման համար հիմք ընդունելով գնահատման արդյունքները:

Ուսանողների աջակցության որակյալ ծառայությունները պետք է.

- մատուցվեն հմուտ ձևով, շահեն ուսանողների վստահությունը,
- կիրառեն միջանձնային հարաբերությունների վրա հիմնված, ուսանողների համար նպաստավոր ռազմավարություն և պրակտիկա՝ դրսևորելով հոգատարություն և անհատական վերաբերմունք,
- ցուցաբերեն պատասխանատվություն և ջանքեր՝ ուղղված ուսանողների անհատական և տարբերացված կարիքների բավարարմանը:

Ուսանողների աջակցության ծառայությունների գնահատումը: Ուսանողների աջակցության ծառայությունների գնահատման հիմնական նպատակը գործող ծառայությունների որակի բարելավումն է: Գնահատումը հիմնականում ուղղված է պարզելու ծառայությունների մասին իրազեկվածությունը, ծառայությունների կիրառելիությունը, ծառայություններից բավարարվածությունը, հետագա բարելավման համար առաջարկությունները:

Այս ծառայությունների գնահատումը չպետք է կրի միայն հաշվետվողականության բնույթ: Այն պետք է գնահատի ոչ միայն ուսանողների բավարարվածությունը, այլև տրամադրվող ծառայությունների արդյունավետությունն ու օգտակարությունը: Գնահատումը պետք է բացահայտի նաև, թե ինչպես է այս կամ այն աջակցության ծառայությունը նպաստել ուսանողների առաջադիմությանը և ուսումնառության ակնկալող վերջնարդյունքների ձեռքբերմանը և ինչպիսի բարելավող միջոցառումներ և քայլեր պետք է ձեռնարկել:

Այս ծառայությունների գնահատման մեթոդներին ցուցաբերվում է խառը մոտեցում, որը թույլ է տալիս միաժամանակ ստանալ ինչպես քանակական տվյալներ՝ օգտագործելով իրազեկվածության, կիրառելիության և բավարարվածության մասին հարցեր, ինչպես նաև որակական տվյալներ՝ հարցաշարերի վերջում ներառելով բաց հարցեր, ինչպես նաև կիրառելով ֆոկուս խմբերի մեթոդը: Արդյունքում պատրաստվում է ուսանողների աջակցության ծառայությունների գնահատման ընդհանրական զեկույց, որը պարունակում է ինչպես քանակական, այնպես էլ որակական վերլուծություններ, համեմատում տվյալները նախորդ գնահատման արդյունքների հետ:

Գնահատման արդյունքների օգտագործումը: Ըստ գնահատման արդյունքների՝ մշակվում են բարելավման խնդիրները և համապատասխան միջոցառումների ծրագիրը, որոնք կարող են արտահայտվել թե Համալսարանի ռազմավարական զարգացման ծրագրում, թե ստորաբաժանումների տարեկան աշխատանքային պլաններում՝ հստակ նշելով կատարման ժամկետները, ակնկալվող արդյունքները:

Ուսումնառության ռեսուրսների և ուսանողների աջակցության ծառայությունների փաստաթղթային փաթեթը: Ուսումնառության ռեսուրսների և ուսանողների աջակցության ծրագրերի պատշաճ օգտագործման և շարունակական բարելավման նպատակներով երաշխավորվում է դրանց փաստաթղթային փաթեթի հետևյալ կազմը.

1) Ուսանողի ուղեցույց՝ առաջարկվող աջակցության ծառայությունների նկարագրությամբ:

2) Կանոնակարգ ուսումնառության ռեսուրսների և ուսանողների աջակցության ծառայությունների մասին և համապատասխան տեղեկաթերթ՝ մատուցվող ծառայությունների մանրամասն նկարագրությամբ:
3) Գրանցամատյան՝ ուսումնառության ռեսուրսների և ուսանողների օժանդակության ծառայությունների վերաբերյալ բողոքների և առաջարկությունների գրանցման համար:
4) Տեղեկաթերթ ԱԲՀ-ում առկա էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսների (էլեկտրոնային գրականություն, դասընթացների քեյս-փաթեթներ, ինքնագնահատման թեստեր և այլն) վերաբերյալ:
5) Կանոնակարգ ուսանողների ուսման վարձերի լրիվ կամ մասնակի փոխհատուցման և դրանց պայմանների վերաբերյալ:
6) Կանոնադրական և կանոնակարգային փաստաթղթեր ուսանողական ինքնակառավարման սկզբունքների և մարմինների գործունեության վերաբերյալ:

2.6.7.Գիտահետազոտական գործունեություն

Համալսարանը նպաստում է հետազոտական նպատակների, նախագծերի իրականացմանը և ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը: Առկա են հետազոտական ավանդույթ և մշակույթ, ինչպես նաև հետազոտության արդյունքների վավերացման մեխանիզմներ:

Գիտահետազոտական գործունեության որակի գնահատումն ընդգրկում է հետևյալ ոլորտները.

- ԱԲՀ-ի գիտահետազոտական գործունեության կառավարումը, երկարաժամկետ ռազմավարությունն ու կարճաժամկետ ծրագրերը, որոնք արտահայտում են գիտահետազոտական ոլորտում համալսարանի հետաքրքրություններն ու հավակնությունները,
- գիտահետազոտական գործունեության միջազգայնացման մակարդակը,
- ֆակուլտետների, ամբիոնների, հետազոտական կենտրոնների և խմբերի գիտահետազոտական ներուժը,
- գիտահետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմները,
- հետազոտությունների արդյունքների ապրանքայնացման հնարավորությունները,
- հաստիքային գիտաշխատողների թիվը,
- հետազոտական նախագծերում ընտրված դասախոսների թիվը,
- ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում,
- գիտական հրատարակությունները, թիվը:

2.6.8. Տեղեկատվական համակարգի կառավարում

Համալսարանը պետք է երաշխավորի, որ կրթական ծրագրերի և գործունեության այլ ուղղությունների արդյունավետ կառավարման համար համապատասխան տեղեկատվություն են հավաքագրում, վերլուծում և օգտագործում:

Բուհն իր սոցիալական դերը կարևորելու համար պետք է իր առաջարկած ծրագրերի և կրթական աստիճանների մասին մշտապես հրապարակի ինչպես քանակական, այնպես էլ որակական նորացված, անաչառ տեղեկատվություն: Կիրառվում են տեղեկատվության հավաքագրման և վերլուծման տարբեր մեթոդներ:

Հավաստի տեղեկատվությունն անհրաժեշտ պայման է որոշում կայացնելու, ինչպես նաև պարզելու համար՝ ի՞նչն է աշխատում արդյունավետ և ի՞նչը բարելավման կարիք ունի: Կարևորվում է բարելավման գործողությունների պլանավորումը ուսանողների և աշխատակիցների մասնակցությամբ:

Տեղեկատվական համակարգը հնարավորություն է տալիս կազմակերպել փաստաթղթերի, համալսարանի գործունեության, գործընթացների որակի մասին շահակիցներին և հասարակությանը տրամադրվող տեղեկատվության կառավարումը:

Բուհի առաքելությունը, ռազմավարությունը, կանոնակարգող փաստաթղթերը, ուղեցույցները, հոդվածների ժողովածուները հասանելի պետք է լինեն ուսանողներին, դասախոսներին ու մյուս շահակիցներին:

<u>Որակին վերաբերող տեղեկատվական համակարգերն ընդգրկում են՝</u>

- ուսանողների առաջընթացն ու առաջադիմության մակարդակը,
- աշխատանքային շուկայում շրջանավարտների պահանջարկը,
- ուսանողների գոհունակությունը կրթական ծրագրերից,
- ուսանողների համակազմը,
- կրթական ռեսուրսների հասանելիությունը և արժևորումը,
- շրջանավարտների կարիերայի աճը,
- բուհի գործունեության գնահատման առանցքային ցուցիչները /ԳԱՑ/ և այլն:

2.6.9. Հրապարակայնություն և հաշվետվողականություն

Համալսարանը պետք է հրապարակի իր գործունեության մասին պարզ, ճշգրիտ, օբյեկտիվ, հրատապ և մատչելի տեղեկատվություն:

Համալսարանը պետք է հավաստի, որ իր ուսումնական ծրագրերի և այլ գործառույթների կառավարման արդյունավետության նպատակով հավաքագրում, վերլուծում և օգտագործում է համապատասխան տեղեկատվություն, որն օգտակար է դիմորդների, ուսանողների, շրջանավարտների, այլ շահագրգիռ կողմերի և հասարակության համար: Հետևաբար, ուսումնական հաստատությունը պետք է տեղեկատվություն տրամադրի իր գործունեության վերա-

բերյալ՝ ներառյալ առաջարկվող կրթական ծրագրերը, նրանց ընդունելության չափորոշիչ-ները, շնորհվող որակավորումները, դասավանդումը, ուսուցումը, գնահատման ընթացա-կարգերը, ուսուցման հնարավորությունները և շրջանավարտների աշխատանքի տեղավորումը:

Բուհերում հրապարակային գործունեությունն ուղղորդվում է երկու հիմնարար գաղափարով.

ա) ազատությունները ձևավորում են պարտավորություններ,

բ) ինքնավարությունը՝ հաշվետվողականություն:

Հիմնարար նշանակություն ունի բուհերի հասարակական պատասխանատվությունը, որն իրականացվում է հրապարակայնության և հաշվետվողականության ձևով:

Հրապարակայնությունը և հաշվետվողականությունը նպաստում են.

- կրթության որակի բարձրացմանը,
- որակավորումների ճանաչմանը,
- ուսանողների և դասախոսական կազմի շարժունությանը,
- բուհի գործունեության նկատմամբ հասարակության վստահության բարձրացմանը,
- ներբուհական համերաշխության և վստահության ամրապնդմանը,
- գիտելիքահեն և հետազոտական ուղղվածությամբ կրթության զարգացմանը,
- վիճակագրական տվյալների վերլուծության բարելավմանը,
- ներքին և արտաքին շահակիցների իրազեկման բարձրացմանը,
- բենչմարքինգի իրականացմանը
- կոռուպցիոն ռիսկերի նվազմանը:

Բուհի գործունեության հրապարակայնության և հաշվետվողականության որակի գնահատումը ներառում է՝

- բուհի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունների արդյունքները,
- բուհի վերաբերյալ հրատարակվող նյութերի քանակը և ծավալը,
- բուհի վերաբերյալ տեղեկատվության տարածման օպերատիվությունը,
- հասարակության հետ կապերի գնահատումը՝ հրատարակվող նյութերը, տեղե-կատվության տարածման ձևերը և միջոցները,
- PR գործունեության նպատակայնությունը,
- ցկյանս ուսումնառության համակարգը՝ շարունակական կրթության և վերապատ-րաստման դասընթացները և այլն,
- Բուհի ներգրավվածությունը հանրային կարիքներին ուղղված պետական և հասարա-կական ծրագրերում:

2.6.10.Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկում և պարբերական վերանայում

Համալսարանը պետք է կարգարի մշտադիտարկում, որպեսզի ապահովի սահմանված նպատակների ձեռքբերումները և համապատասխանությունը ուսանողների և հասարակության պահանջներին, ինչը կնպաստի ծրագրերի շարունակական բարելավմանը: Ցանկացած պլանավորվող գործունեության և ստացված արդյունքի վերաբերյալ պետք է իրազեկվեն շահագրգիռ կողմերը:

Կրթական ծրագրերի մշտադիտարկումը և վերանայումն ուղղված են նրանց արդյունավետ իրականացմանը, ուսանողների ուսուցման համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը և ընդգրկում են.

- ծրագրի բովանդակությունը կոնկրետ դասընթացների շրջանակում,
- փոխադարձ դասալսումներ և բաց դասեր,
- ուսանողների կողմից դասախոսի գնահատում,
- հասարակության պարբերաբար փոփոխվող պահանջները,
- ուսանողների ուսումնական ծանրաբեռնվածությունը, առաջադիմությունը,
- ուսանողների գնահատման արդյունավետությունը,
- ուսանողների աջակցությունը, կրթական միջավայրը, ծառայությունները և նրանց համապատասխանությունը ծրագրի նպատակներին:

Կարևոր է արտաքին գնահատողների ներգրավումը ՄԿԾ-ի մշակման և գնահատման գործընթացում, օրինակ՝ ավարտական քննական հանձնաժողովի խորհրդատվությունը ՄԿԾ-ի մշակման և գնահատման գործընթացում կարող է օգտակար լինել: Անկողմնակալությունն ապահովելու համար նրանք չեն կարող մասնակցել ՄԿԾ-ի պաշտոնական հաստատմանը և ներգրավված լինել վերանայող հանձնաժողովներում:

ՄԿԾ-ի մշակման և գնահատման գործընթացում կարող են իրականացվել տարբեր ներդրումներ՝

- արտաքին խորհրդատվությունը կարող է տրամադրել համապատասխան տեղեկատվություն և ուղղորդում տվյալ ոլորտի վերջին զարգացումների վերաբերյալ,
- ներմուհական այլ մասնագիտությունների գործընկերների խորհրդատվություն,
- միջմուհական համաձայնագրերի շրջանակներում տրամադրվող խորհրդատվություն,
- ներկայիս ուսանողների արձագանքներ,
- շրջանավարտների արձագանքներ,
- մասնագիտական և գործատուների միությունների խորհրդատվություն:

Շարունակական մշտադիտարկման գործընթացը, որը, սովորաբար, իրականացվում է ակադեմիական տարվա ավարտին կատարողականի մասին համապատասխան տեղեկատվություն ստանալու համար, կարող է հաշվի առնել, օրինակ՝

- ավարտական քննական հանձնաժողովի զեկույցները,
- հավատարմագրող կամ այլ արտաքին մարմինների զեկույցները,

- աշխատակազմի և ուսանողների հետադարձ կապը,
- նախկին ուսանողների և նրանց գործատուների հետադարձ կապը,
- ուսանողների առաջընթացը և այլ համապատասխան տվյալներ,
- ուսանողներին հասանելի նյութեր՝ ՄԿԾ-ի նկարագրերը,
- ուսանողների համար նախատեսված ուղեցույցները, կայքերը և այլն:

Արտաքին և ներքին գնահատումների արդյունքում ստացած յուրաքանչյուր երաշխավորության արդյունավետ և հետևողական իրականացումը կբավարարի ուսանողների հետաքրքրությունները և թույլ կտա անդրադառնալ յուրաքանչյուր աշխատակցի և ռեսուրսների զարգացման կարիքներին:

Ակադեմիական ծրագրի վերանայումը որակի ապահովման մեկ այլ մեխանիզմ է: Հարկ է շեշտել շարունակական գնահատման հիմնական սկզբունքը. գնահատման գործընթացները մեկը մյուսից անջատ չեն իրականացվում:

Պարբերական վերանայումը գնահատում է ծրագրի վավերականությունը ու շուկայի պահանջներին համապատասխանությունը, օրինակ՝

- ՄԿԾ-ի մշակման և գործառնման թե՛ ընդհանուր, թե՛ ժամանակի ընթացքում իրականացված փոփոխությունների ազդեցությունը,
- դասավանդողների և ֆիզիկական ռեսուրսների մշտական հասանելիությունը,
- համապատասխան ոլորտի շրջանակներում առկա հետազոտության և փորձի, տեխնոլոգիական առաջընթացի, դասավանդման ու ուսումնառության վերջին զարգացումը,
- արտաքին հոլման կետերում, օրինակ՝ ՈԱՇ-ում կատարված փոփոխությունները,
- ուսանողների պահանջի, գործատուների սպասումների և աշխատանք ունենալու հնարավորությունների փոփոխությունները,
- ուսանողների առաջընթացի և առաջադիմության տվյալները,
- ուսանողների հետադարձ կապը:

2.6.11. Որակի արտաքին գնահատում

Բուհը պետք է պարբերաբար անցնի որակի արտաքին ապահովման ընթացակարգերով՝ ESG-ին համապատասխան:

Բուհերի գործունեության որակի արտաքին գնահատման գործընթացներն իրականացվում են Բարձրագույն կրթության Եվրոպական տարածքում գործող (ESG) չափանիշներին, չափորոշիչներին և ուղենիշներին (ՈԱԵՉՈՒ) համապատասխան: Որակի արտաքին ապահովման գործընթացներն ու ընթացակարգերն ուղղված են ներքին որակի ապահովման գործընթացների արդյունավետության ստուգմանը և ծառայում են որպես զարգացման ու նոր հնարավորությունների իրացման գործոններ, որոնք նաև տեղեկատվություն են տրամադրում հասարակությանը բուհի գործունեության որակի մասին:

Ուսումնական հաստատությունները պարբերաբար ենթարկվում են որակի արտաքին ապահովման ընթացակարգերին՝ օրենսդրության պահանջներին համապատասխան: Որակի արտաքին ապահովումն իրականացվում է տարբեր ձևերով, կառուցվածքային տարբեր մակարդակներով (ուսումնական հաստատություն, ֆակուլտետ, կրթական ծրագիր):

Որակի ապահովումն անընդհատ գործընթաց է, որը չի ավարտվում միայն արտաքին հետադարձ կապի ապահովմամբ, հաշվետվության ներկայացմամբ կամ հաջորդ ընթացակարգերի ընդունմամբ: Յուրաքանչյուր անգամ՝ հաշվի առնելով որակի արտաքին ապահովման վերջին ընթացակարգերից հետո ձեռքբերած առաջընթացը, պետք է ստեղծել փոխադարձ կապեր, նախապատրաստվել հաջորդ ընթացակարգին և հաստատության տիրույթում համապատասխան հաջորդիվ գործողություններ իրականացնել:

2.7. Ուսանողների ներգրավվածությունը ՈԱ գործընթացներում

Ուսանողների մասնակցությունը Համալսարանի կրթական գործընթացներին և նրանց բովանդակության գնահատմանը Բոլոնյան գործընթացի հիմնական պահանջներից է: Բուհի որակի ներքին ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավվածությունը կարևորվել է ինչպես 2005 թ. Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների մշակման, այնպես էլ 2015թ. դրանց վերանայման գործընթացներում:

Ուսանողները բուհի հիմնական շահառուներն են, իսկ նրանց բավարարվածության աստիճանը՝ մատուցվող ծառայություններից և ակնկալվող արդյունքներից, կարևոր ցուցիչ է կրթության որակի ապահովման գործընթացներում:

Ուսանողակենտրոն կրթության և կրթության որակի շարունակական բարելավման ապահովման նպատակով Համալսարանը կարևորում է ուսանողների հետ համագործակցությունը, ուսանողների ներգրավվածությունը կրթության որակի ապահովման գործընթացներում: ԱԲՀ որակի ապահովման պատասխանատուները պարբերաբար հանդիպումներ են ունենում ուսանողների հետ, նրանց ներկայացնում որակի ապահովման գործընթացները և ուսանողների դերը դրանցում: Ուսանողների հետ շփումների արդյունքում ձեռքբերված տեղեկատվությունը, ժամանակին կարիքների վերհանումը կարող են ուղղորդել համալսարանի ուսումնական գործընթացի, կրթական ծրագրերի վերանայմանը, ուսումնառության և դասավանդման արդյունավետության գնահատմանը:

Ուսանողական խորհուրդը հնարավորություն է տալիս ուսանողներին ստեղծելու պայմաններ ոչ միայն ուսանողների ինքնադրսևորման համար՝ մասնագիտական, ստեղծագործական, հետազոտական և այլ ոլորտներում, այլ ուսանողների կարիքների վերհանման և ժամանակին արձագանքման, Համալսարանի կառավարման գործընթացներում մասնակցության, ուսուցման կազմակերպման և այլ հարցերում: Ուսանողներին հնարավորություն է

ընձեռվում մասնակցել Համալսարանում կազմակերպված սեմինարներին, ֆորումներին ու աշխատաժողովներին:

Կարևորվում է բուհերի հավատարմագրման գործընթացում նրանց մասնակցությունը, ուստի փորձագիտական խմբերում պարտադիր ընդգրկվում է մեկ ուսանող:

Այսպիսով, ուսանողների ներգրավումը որակի գործընթացներում կարևորվում է, քանի որ՝

- երաշխավորում է այն փաստը, որ ուսանողների կարծիքը կարևոր նշանակություն ունի բուհում որոշումների կայացման գործում,
- ուսանողների մոտ ստեղծում է սեփականատիրոջ զգացում սեփական կրթության նկատմամբ,
- ուսանողներին հնարավորություն է ընձեռվում դասավանդման և ուսումնառության վերաբերյալ կարծիք արտահայտել, ներդրում ունենալ կրթության կազմակերպման գործում,
- խրախուսում է տարբեր շահակիցների միջև կրթական ծառայությունների վերաբերյալ կառուցողական բանավեճը, ստեղծվում է կապ աշխատակազմի և ուսանողների միջև:

«ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

I. Ելակետային դրույթներ.

1. **Եվրոպական ENQA ստանդարտ.** Բուհերը պետք է ունենան քաղաքականություն և համակցված ընթացակարգեր՝ իրենց ծրագրերի ու որակավորումների որակի և չափորոշիչների համապատասխանության ապահովման համար: Քաղաքականությունը, ռազմավարությունը և ընթացակարգերը պետք է պաշտոնական կարգավիճակ ունենան և հանրայնորեն մատչելի լինեն: Դրանք պետք է ներառեն նաև ուսանողների և այլ շահակիցների դերի ձևակերպումը:
2. Քաղաքականությունն արտացոլում է համալսարանի առաքելությունն ու որդեգրված արժեքները և սերտորեն կապված է ռազմավարական պլանի և իրականացվող գործընթացների հետ:
3. Որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը ստեղծում են անհրաժեշտ հենք, որի շրջանակներում համալսարանը ձևավորում է որակի ապահովման իր համակարգը, գնահատում դրա գործունեության արդյունավետությունը:
4. ՈՆԱ քաղաքականությունը տարածվում է համալսարանի բոլոր այն գործառույթների և գործողությունների վրա, որոնք ազդում են կրթական ծրագրերի չափանիշների պահպանման և ապահովման վրա, ինչպիսիք են դասավանդումը, հետազոտական գործունեությունը, ուսումնառությանն աջակցելու ծառայությունները, նյութատեխնիկական բազան, կառավարումը, հանրային ծառայությունները և համագործակցությունը գործատուների հետ:
5. Որակի ապահովման քաղաքականության հաջող իրականացման համար համալսարանը հատկացնում է անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ:
6. Որակի ապահովման համակարգի մշակումը, ներդրումը և անընդհատ կատարելագործումը համալսարանի ղեկավար անձնակազմի առաջնահերթ խնդիրներից է, ինչն ապահովվում է համալսարանի մրցունակությունը և կայունությունը՝ հաշվի առնելով շահակիցների բավարարվածությունը կրթական ծառայությունների շուկայում, գիտական և ինովացիոն գործունեությունում:

II. ԱԲՀ որակի ապահովման քաղաքականության նպատակը

1. Համալսարանի որակի ներքին ապահովման քաղաքականության հիմնական նպատակը եվրոպական չափանիշներին և ուղենիշներին համապատասխան որակի ներքին մշակույթի ձևավորումը, տարածումն ու զարգացումն է, ԱԲՀ-ի ռազմավարական նպատակներին ու խնդիրներին համապատասխան առաքելության իրականացումը: ՈՆԱ

նպատակն է նաև որակի արտաքին գնահատման հիմքերի հիմքերի ձևավորումը՝ շարունակաբար բարձրացնելով իրականացվող ուսումնական, հետազոտական և կառավարման գործընթացների արդյունավետությունը:

II. ԱԲՀ որակի ապահովման քաղաքականությունը

Համալսարանի որակի քաղաքականությունն ուղղված է հետևյալ նպատակների իրականացմանը՝

2. ԱԲՀ-ի ռազմավարական նպատակներին ու խնդիրներին համապատասխան առաքելության իրականացում,
3. եվրոպական չափանիշներին և ուղենիշներին համապատասխան որակի ներքին մշակույթի ձևավորում, տարածում ու զարգացում,
4. որակի արտաքին գնահատման հիմքերի ձևավորում,
5. շահակիցների պահանջներին և ազգային ու միջազգային չափորոշիչներին համապատասխան որակյալ ժամանակակից կրթության ապահովում,
6. որակի կառավարման համակարգի արդյունավետության անընդհատ բարելավում,
7. իրականացվող կրթական ծրագրերի և շնորհող որակավորումների անընդհատ պլանավորում, մշտադիտարկում, վերլուծություն և որակի գնահատում,
8. հաստատված չափորոշիչների և կարգերի հիման վրա ուսանողների գիտելիքների մակարդակի անընդհատ գնահատում,
9. դասավանդող անձնակազմի մասնագիտական մակարդակի բարձրացում և նրանց կոմպետենցիաների գնահատում,
10. համալսարանի տեղեկատվական, նյութատեխնիկական և ուսումնամեթոդական հենքի ձևավորում և անընդհատ կատարելագործում,
11. համալսարանի կրթական ծրագրերի և գործունեության այլ տեսակների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն և տարածում,
12. համալսարանի կողմից իրականացվող կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ հասարակությանն անընդհատ տեղեկացում:

III. Որակի ներքին ապահովման քաղաքականության խնդիրները

Գլխավոր նպատակներից բխում են հետևյալ խնդիրները՝

- Համալսարանի որակի կառավարման ճկուն համակարգի ստեղծում և/կամ կատարելագործում:
- Համալսարանում ՄԿԾ-ների պարբերական վերանայման ու մշտադիտարկման գործիքակազմի մշակում և/կամ կատարելագործում,
- ՄԿԾ-ների բովանդակային կատարելագործում, ուսումնառողների և դասախոսների ակադեմիական շարժունության ապահովման պայմանների ընդլայնում:
- Համալսարանի որակի ներքին ապահովման պատասխանատուների պարբերաբար վերապատրաստումների իրականացում, նրանց մասնագիտական կոմպետենտության ընդլայնում:
- Համալսարանի դասավանդող անձնակազմի գործունեության, ուսանողների ուսումնառության, կրթական ծառայություններ մատուցող կառույցների գործունեության որակի մշտադիտարկման համակարգի մշակում և/կամ կատարելագործում:
- Հաստատված չափորոշիչների և կարգերի հիման վրա ուսանողների գիտելիքների պարբերաբար գնահատում:
- Պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման շարունակական բարձրացման գործընթացի կազմակերպում, նրանց մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատում:
- Համալսարանի տեղեկատվական, նյութատեխնիկական և ուսումնամեթոդական բազայի ձևավորում և անընդհատ կատարելագործում:
- Որակի ապահովման համակարգի կատարելագործման և նոր կրթական տեխնոլոգիաների և ծրագրերի ներդրման նպատակով առաջատար այլ համալսարանների հետ համագործակցության իրականացում:
- Համալսարանի կողմից իրականացվող կրթական գործունեության որակի վերաբերյալ հասարակությանը կանոնավոր տեղեկատվության տրամադրման ապահովում, ՈԱ գործընթացների հրապարակայնություն ու թափանցիկություն:
- Համալսարանի անձնակազմի և ուսումնառողների սոցիալական աջակցության ապահովում և նրանց առողջության ու անվտանգության պաշտպանության իրականացում:
- Տրամադրվող կրթական ծառայությունների և գիտահետազոտական աշխատանքների որակի ապահովում և համադրում:
- Համալսարանի շահակիցների հետ կայուն հետադարձ կապի հաստատում, նրանց կարիքների վերհանման, պահանջների ուսումնասիրություն, վերլուծության իրականացում:
- Համալսարանի գործունեության բոլոր ոլորտների գործունակության որակին վերաբերող տվյալների բազայի ստեղծում և ապահովում:

– Հավաստի և ամբողջական տեղեկատվության և վերլուծության վրա հիմնված որոշումների կայացման սկզբունքի կիրառում:

IV. ՈԱ քաղաքականության իրականացման մեխանիզմները և ակնկալվող արդյունքները

ԱԲՀ ՈԱ քաղաքականությունն ուղղված է շահառուների (ուսանողներ, դասախոսներ, վարչական աշխատակազմ, շրջանավարտներ, գործատուներ, այլ կազմակերպություններ) կրթական և գիտահետազոտական նպատակների իրականացմանը և հիմք է հանդիսանում համալսարանի գործունեության ու որոշումների կայացման համար: Կատարողականների պարբերաբար քննարկումները, գնահատումները և համապատասխան ցուցիչների վերանայումն՝ ըստ թիրախների, խթանում են կրթական ծրագրերի հետագա բարելավումն ու կատարելագործումը:

Փաստաթղթերում կատարողական տվյալների պարբերաբար արձանագրումը կարևոր նշանակություն ունի որակի պահպանման և բարելավման համար: Ընթացակարգերն ապահովում են որոշումների պաշտոնական, պարբերաբար և հետևողական կայացումը: Համալսարանը պետք է որդեգրի համապատասխան քաղաքականություն՝ երաշխավորելու համար, որ այդ գործողությունները որակի ապահովման ընթացակարգերով չեն շրջանցվել:

Որակի քաղաքականության իրականացման, սահմանված նպատակների կատարման և համապատասխան պայմանների ստեղծման համար պատասխանատու է համալսարանի ղեկավարությունը և ողջ աշխատակազմը:

Որակի ապահովման ոլորտում քաղաքականության իրականացումը ենթադրում է հետևյալ արդյունքները.

– Բարձրացնել համալսարանի աշխատակիցների պատասխանատվությունը՝ ուսումնական, գիտական և վարչարարական գործունեության բոլոր մակարդակներում:
– Ապահովել շահակիցների բավարարվածությունը համալսարանի կրթական ծառայությունների որակից:
– Թափանցիկ դարձնել կրթական ծառայությունների որակի կառավարման և գնահատման գործընթացը:
– Որակի գաղափարը իրականացնելու համար բարձրացնել համալսարանական հանրության աշխատանքի մոտիվացիան:
– Բարձրացնել համալսարանի հեղինակությունը կրթական միջավայրում և աշխատանքի շուկայում:

V. Որակի ներքին ապահովման քաղաքականության սկզբունքները

ԱԲՀ-ում որակի ներքին ապահովման գործընթացի հիմքում ընկած են ընդհանուր և մասնավոր որոշ սկզբունքներ:

Ընդհանուր սկզբունքներն են՝

ա) թափանցիկություն ու հրապարակայնություն

Ըստ այս սկզբունքի, ՈԱ գործընթացներում որոշումների կայացմանը պետք է մասնակցություն ունենան ներքին և արտաքին շահակիցները:

ՈԱ գործընթացների իրականացման ամբողջ ընթացքը, դրանց քանակական և որակական արդյունքները, գործընթացների իրականացման արդյունքում ընդունված որոշումները պետք է հասանելի լինեն շահագրգիռ անձանց և/կամ ներքին և արտաքին շահակիցներին:

բ) հաշվետվողականություն

ԱԲՀ-ում ՈԱ գործառույթներ իրականացնող ստորաբաժանումները սահմանված ներքին կանոններին համապատասխան պետք է հաշվետվություններ և/կամ վերլուծություններ ներկայացնեն ՈԱ ոլորտում կատարած աշխատանքի արդյունքի, հետագա անելիքների վերաբերյալ: Դրանք պետք է հասանելի լինեն ԱԲՀ-ի ներքին և արտաքին շահակիցներին:

գ) մատուցած կրթական ծառայությունների որակի համար պատասխանատվություն

Մատուցած կրթական ծառայությունների որակի համար հիմնական պատասխանատվությունը կրում է համալսարանը՝ ՀՀ կրթական օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ կրթական նվազագույն ստանդարտների պահպանմամբ:

դ) ՈԱ գործընթացների շարունակականություն

Համաձայն համալսարանի ներքին կանոնների՝ ԱԲՀ-ի ղեկավարությունը, համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները, այլ աշխատակիցներ, ապահովում են ՈԱ գործընթացների պարբերական իրականացում:

ե) մատուցած կրթական ծրագրերի և որակավորումների որակի պարբերական հավաստում

Համալսարանն իր մատուցած կրթական ծրագրերի ու որակավորումների որակը պարբերաբար հավաստելու պարտավորություն է կրում արտաքին և ներքին շահակիցների առջև: Կրթության որակը հավաստում է ՀՀ կրթական օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մասնավոր սկզբունքներն են՝

ա) ՈԱ գործընթացների ապակենտրոնացվածություն

Կրթական չափորոշիչների, ՄԿԾ-ների և որակավորումների ՈԱ գործընթացների համար անմիջական պատասխանատու են համալսարանի մասնագիտական ամբիոնները, ինչպես նաև գործառույթների բնույթից ելնելով՝ համապատասխան ստորաբաժանումները:

բ) ՈԱ կենտրոնացված կանոնակարգում

ԱԲՀ ում ՈԱ գործընթացները կանոնակարգված են: Գնահատման միասնական չափանիշներով առաջնորդվում են համալսարանի բոլոր ստորաբաժանումները:

գ) ՈԱ գործընթացներին ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածություն

Համալսարանը ՈԱ գործընթացներին պետք է ապահովի ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը, որի համար պատասխանատու են ԱԲՀ-ի ղեկավարությունը, ինչպես նաև համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները:

VI. ՈԱ քաղաքականության գնահատման մեխանիզմները

Համալսարանի ՈԱ համակարգը կարող է արդյունավետ իրականացվել, վերահսկվել, գնահատվել և զարգանալ որակի կառավարման ու ապահովման արդյունավետ քաղաքականությամբ:

Որակի քաղաքականության արդյունավետությունը գնահատվում է համապատասխան գործընթացների համար պատասխանատու մարմինների, ստորաբաժանումների կատարողականների, ինքնավերլուծությունների, հաշվետվությունների քննարկումներով և ներքին ու/կամ արտաքին աուդիտի հաշվետվությունների, փորձագիտական եզրակացությունների, որակական հետազոտությունների, վերլուծությունների հիման վրա, որոնց ընթացքում ձևավորվում են նկատառումներ և վերանայման, բարելավման առաջարկություններ:

Գործընթացների որակի գնահատումը ԱԲՀ-ում կատարվում է համապատասխան գործիքակազմով:

Որակի ապահովման և կառավարման գործիքակազմի ընտրության համար հիմք են հանդիսանում նաև ՀՀ մասնագիտական կրթության ՈԱԱԿ-ի կողմից մշակված աշխատանքային նյութերը, կրթական հաստատությունների ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության չափանիշները, չափորոշիչները:

Որակի գնահատման գործընթացում համալսարանի ներքին ու արտաքին հիմնական շահակիցների ակտիվ, լիարժեք ներգրավվածությունը որակի գնահատման գործընթացի արդյունավետության երաշխիքներից է:

VII. ՈԱ քաղաքականության բարելավման գործողություններ և մեխանիզմներ

Բուհը պարբերաբար մշտադիտարկումներ, քննարկումներ և վերլուծություններ պետք է ձեռնարկի որակի ապահովման գործընթացի արդյունավետության, որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացման խնդիրների վերաբերյալ, որի ընթացքում կատարվում են պլանների վերանայում, շտկումներ և/կամ վերամշակում: Եթե հաստատությունը չի հասել իր սահմանած նպատակներին, ապա պետք է մշակել բարելավման ծրագրեր՝ նրանցում ներառելով համապատասխան միջոցառումներ: Որակի շարունակական

բարելավումն ընդգրկում է երեք հիմնական գործողություն՝ նպատակների և չափորոշիչների սահմանում, գործունեության արժևորում ըստ այդ չափորոշիչների և հետագա գործունեության բարելավում: Դա ձևավորվում է որակի համապարփակ կառավարման շարժիչ սկզբունքով՝ պլանավորում, իրականացում, գնահատում և բարելավում՝ ՊԻԳԲ գործընթացով, որի միջոցով հաստատությունն իր և շահակիցների համար հաստատում է, որ հնարավորինս բարձր չափորոշիչների է հասել գործունեության բոլոր ոլորտներում:

Այսպիսով, բարելավման գործողությունները կարող են ներառել.

- գործունեության հիմնական ոլորտներին ուղղված գործընթացների մշտադիտարկման և ներքին ու արտաքին շահառուներից ստացված կարծիքների հիման վրա գործող մեխանիզմների անընդհատ կատարելագործում, արդյունավետության բարձրացում,
- որակի ապահովման և բարելավման համար առանցքային նշանակություն ունեցող կատարողական տվյալների պարբերաբար արձանագրում, վերլուծություն, քննարկում և գնահատում,
- ռազմավարական ծրագրերի, պլանների կատարման ընթացքի մշտադիտարկում, արդյունքների գնահատում ըստ գործունեության ոլորտների, անհրաժեշտության դեպքում ծրագրերի վերանայում, բարելավման ծրագրերի իրականացում,
- կրթական միջավայրի պարբերաբար վերլուծություններ կրթական և գիտահետազոտական գործընթացների որակի տեսանկյունից՝ դիտարկելով ներկա վիճակը և բարելավմանն ուղղված գործողությունները, խոչընդոտները, ինչպես նաև հետագա զարգացմանը միտված նախաձեռնություններն ու մտադրությունները,
- համալսարանի կրթական, մշակութային, գիտահետազոտական, վարչական և կազմակերպչական գործընթացների ընթացակարգերի պարբերաբար վերանայում, կատարելագործում, արդյունավետության բարձրացում,
- որակի մշակույթի ձևավորում, շարունակական զարգացում, որակի ինստիտուցիոնալ և ծրագրային կառավարման տահուն ընթացքի ապահովում,
- վերջնարդյունքի կարևորության հաշվառում յուրաքանչյուր ոլորտի գործունեության գնահատման համար,
- արտաքին գործոնների ազդեցության հաշվառում, մարտահրավերների, ռիսկերի, սպառնալիքների կարճաժամկետ և երկարաժամկետ գնահատում և համապատասխան շտկողական գործողությունների իրականացում,
- բենչմարքինգ, գործող ծրագրերի վիճակի գնահատում և շտկողական գործողություններ որակի ապահովման և կառավարման հանրապետական ու միջազգային հենանիշներին համապատասխան,
- ներքին և արտաքին փորձագիտական եզրակացությունների հիման վրա առանձին ոլորտների կամ ինստիտուցիոնալ գործունեության արդյունքների գնահատում և համապատասխան բարելավման ծրագրերի իրականացում:

Որակի ոլորտի քաղաքականությունների և ընթացակարգերի վերանայում.

- Բոլոր քաղաքականությունները և ընթացակարգերը պետք է վերանայվեն յուրաքանչյուր հինգ տարին մեկ:
- Վերանայումը կարող է նաև կատարվել յուրաքանչյուր պահին, երբ առաջանում է դրա անհրաժեշտությունը:
- Վերանայումը պետք է ներառի՝
  - խորհրդակցությունը քաղաքականությունն օգտագործող շահակիցների հետ,
  - պահանջների համապատասխանության ուսումնասիրումը քաղաքականությունների և կարգերի/ընթացակարգերի միջև,
  - քաղաքականության բովանդակության քննարկումը,
  - քաղաքականության իրականացման գնահատումը:
- Վերանայումը կարող է ավարտվել՝
  - առանց փոփոխությունների կատարման,
  - աննշան շտկումներով,
  - հիմնական կետերի շտկումով,
  - փաստաթղթի չեղյալ համարումով:
- Վերանայման ավարտին վերանայման համար պատասխանատուն պետք է տեղեկացնի բոլոր ստորաբաժանումներին վերափոխումների վերաբերյալ:

VIII. Որակի ներքին ապահովման քաղաքականության հաստատումը և նրանում կատարվող փոփոխությունները

Որակի ապահովման ԱԲՀ-ի քաղաքականությունը հաստատվում և նրանում փոփոխություններ կարող են կատարվել Համալսարանի Գիտական խորհրդի կողմից:

Որակի ապահովման ԱԲՀ-ի քաղաքականության փոփոխության առաջարկով կարող են հանդես գալ.

ա) համալսարանի ռեկտորը,

բ) գիտական խորհրդին կից գործող ՈԱ հանձնաժողովը,

գ) որակի ապահովման գծով պրոռեկտորը:

Մեթոդական ուղեցույց ՄԿԾ պատասխանատուների համար

ՄԿԾ-ի մշակումը ենթադրում է հետևյալ երեք կարևոր խնդիրների լուծում՝

1. Ի՞նչ պետք է սովորեն ուսանողները (ուսումնառության վերջնարդյունքները):
2. Ինչպե՞ս պետք է այն սովորեն (դասավանդման և ուսումնառության մեթոդները):
3. Ինչպե՞ս պարզել ուսումնառության արդյունքների ձեռքբերումը (գնահատման ձևերը):

Կրթական ծրագրի նպատակները

Ծրագրի կրթական նպատակը/ները սահմանելիս պետք է հիմք ընդունել հետևյալ սկզբունքները՝

1. կրթական ծրագիրը պետք է ունենա հեշտ ընկալվող, հստակ սահմանված նպատակ,
2. պետք է ցույց տրվեն ծրագրի մասնակցի հնարավորություններն ու առավելությունները,
3. նպատակները կարելի է ընդունել նաև որպես կրթական վերջնարդյունքների ընդհանուր ձևակերպում,
4. նպատակները պետք է համահունչ լինեն բուհի առաքելությանը, ՈԵԾ-ին, ՈԱԾ-ին, ինչպես նաև որակավորումների ոլորտային շրջանակին:
5. 6-7 նպատակի թվարկումը բավարար է ծրագիրը ներկայացնելու համար: Դրանք ձևակերպելիս խորհուրդ է տրվում օգտագործել *զարգացնել, ապահովել, օժանդակել, տեղեկացնել, ծանոթացնել, նախապատրաստել, խթանել, աջակցել* և նմանօրինակ բառեր:

Ծրագրի կրթական վերջնարդյունքների ձևակերպում

Կրթական վերջնարդյունք ասելով հասկանում ենք այն, թե ինչ պետք է գիտենա, հասկանա և կարողանա ուսումնառողը կրթական ծրագրի ավարտին: Կրթական վերջնարդյունքները պետք է լինեն ստուգելի և չափելի: Դրանք ձևակերպելու համար պետք է օգտվել հետևյալ սկզբունքներից.

1. կրթական վերջարդյունքների ձևակերպումը պետք է լինի նվազագույն մակարդակում,
2. կրթական վերջնարդյունքների համար պետք է նշվի ուսումնական տարին,

3. պետք է գնահատվի ձեռքբերված վերջնարդյունքը,
4. ծրագիրը համարվում է հաջողությամբ ավարտված, եթե ուսումնառողը յուրացրել է բոլոր կրթական վերջնարդյունքները:

Ծրագրի կրթական վերջնարդյունքն իր մեջ ներառում է՝

- Մասնագիտական գիտելիքներ
- Գործնական մասնագիտական կարողություններ
- Ընդհանուր կարողություններ

Վերջնարդյունքների իրականացումը չի կարող գնահատվել անմիջականորեն ուսումնառության ընթացքում, դրանց մեծ մասը գնահատվում են ուսումնառության ավարտին՝ ավարտական ատեստավորման ժամանակ: Նշենք, որ որոշ վերջնարդյունքների ձեռքբերումը կարող են հավաստել ընթացիկ պրակտիկաները: Ծրագրի ընդհանուր դրույթները և բնութագրական առանձնահատկությունները ներկայացնելու համար նախընտրելի է, որ ուսումնառության վերջնարդյունքները լինեն 8-11-ը:

Դասընթացների կրթական վերջնարդյունքների ձևակերպումը

Դասընթացի կրթական վերջնարդյունքները ներառում են տեղեկատվություն այն մասին, թե ինչը պետք է գնահատվի և ինչ պետք է իմանա, հասկանա և կարողանա ուսումնառողը: Դասընթացի կրթական վերջնարդյունքները ձևակերպելիս պետք է նկատի ունենալ հետևյալ սկզբունքները.

- գրել ապառնի ժամանակով,
- սահմանել 4-6 կրթական վերջնարդյունք, որոնք պետք է լինեն գնահատելի, դիտարկելի,
- դասընթացի կրթական վերջնարդյունքները պետք է համապատասխանեն առնվազն նվազագույն շեմին,
- անցողիկ գնահատական ստանալու համար ուսումնառողը պետք է յուրացնի սահմանված բոլոր կրթական վերջնարդյունքները:
- վերջնարդյունքների ձեռքբերման և գնահատման միջև կապը պետք է լինի նկատելի,
- պետք է նկարագրվեն, թե ինչ կարող են անել ուսումնառողները ուսումնառության արդյունքում:

Ներկայացնենք Բլումի տաքսոնոմետրիան, որն առաջ է քաշվել նրա կողմից և հնարավորություն է տալիս ձևավորել չափելի վերջնարդյունքներ:

Բլումի տաքսոնոմետրիան

	Մակարդակ	Իմացության ձևերը	Համապատասխան բայերը (ցանկն ամբողջական չէ)
Գիտելիք և իմացություն	1.	Գիտելիք (որոշակի փաստերի կամ տվյալների հիշողություն)	Արտահայտել, գիտակցել, ընտրել, վերարտադրել, չափել, ցուցադրել,որոշել, թվարկել, անվանել, վերհիշել, գրանցել, պնդել և այլն
	2.	Իմացություն (փաստերի /տվյալների համակարգման ունակություն իմաստը հասկանալու նպատակով)	Որոշել, սահմանել, ներկայացնել, ձևակերպել, բացատրել, հակադրել, նկարագրել, քննարկել, ճանաչել, հիմնավորել, ընտրել, մատնանշել, լուսաբանել, դասակարգել և այլն
Կարողություններ	3.	Վիրառություն (առաջադրանքի կամ խնդրի համատեքստում գիտելիքի/իմացության օգտագործում)	Կանխատեսել, ընտրել, գնահատել, գտնել, ցուցադրել, օգտագործել, կառուցել, հաշվարկել, կիրառել, ցուցաբերել, լուսաբանել, գործնականում իրականացնել, սովորեցնել, կատարել և այլն
	4.	Վերլուծություն (տեղեկատվությունը մասերի բաժանելու ունակություն մասերի փոխհարաբերությունները կամ նշանակությունները հասկանալու նպատակով)	Համեմատել, տարբերակել, համադրել/հակադրել, տրոհել/մասերի բաժանել, տարբերակել, վերլուծել, հաշվարկել, փորձարկել, բացահայտել, տարանջատել, լուծել և այլն
	5.	Սինթեզ (տեղեկատվությունը կամ փաստերը նորովի համատեղելու ունակություն խնդրի կամ հիմնախնդրի ավելի լավ կամ համակողմանի ընկալման նպատակով)	Միավորել/միացնել, ի մի բերել, ամփոփել, կազմակերպել/համակարգել, եզրակացնել /եզրահանգել, նախագծել, առաջարկել, վերաձևակերպել, քննարկել, ստանալ, մեկնաբանել, ընդհանրացնել և այլն
Հմտություններ	6.	Գնահատում/արժևորում (առկա տեղեկատվության հիման վրա եզրահանգումներ անելու և դրանք գնահատելու ունակություն)	Արժևորել, աջակցել, հակադրել,համադրել, ընտրել, քննադատել, որոշել, համեմատել, գնահատել, եզրահանգել, հետևություններ անել, ենթադրել, պաշտպանել և այլն

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը, սկզբունքները.

Ուսումնառության և դասավանդման մեթոդների ընտրության համար կարող ենք հիմք ընդունել հետևյալ սկզբունքները՝

1. Ուսումնառության և դասավանդման մեթոդները պետք է առավելագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը ուսանողների կողմից:
2. Ուսումնառության և դասավանդման մեթոդները պետք է հաշվի առնեն ընդունակությունների տարբեր աստիճաններ ունեցող ուսանողների կարիքները:
3. Ուսումնառության և դասավանդման մեթոդները պետք է հնարավորություն տան խմբակային աշխատանքներ կատարելու համար, խթանեն ուսանողների ակտիվությունն ու ինքնուրույն գործելակերպը:

4. Ուսումնառության և դասավանդման մեթոդները պետք է ապահովեն հետադարձ կապ ուսանողի և դասախոսի միջև:

Գնահատման մեթոդների ընտրությունը. ուղղված է ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերումը գնահատելուն, ինչպես նաև հետադարձ կապի միջոցով դրանց ձեռքբերմանը նպաստելուն: Գնահատման մեթոդներն ընտրվում են հետևյալ սկզբունքով՝ ինչպես կարելի է ստուգել ուսանողը հասել է այս կամ այն վերջնարդյունքին: ՄԿԾ-ի վերջնարդյունքների ձեռքբերումը ստուգվում է ավարտական ատեստավորման ժամանակ: ՄԿԾ պատասխանատուները մանրամասն պետք է ձևավորեն գնահատման ռուբրիկը, սահմանեն ինչպես և ինչն են գնահատելու ատեստավորման ժամանակ:

Ուսումնառության ռեսուրսներ. ցանկացած ՄԿԾ հաջող իրականացնելու համար անհրաժեշտ են համապատասխան մարդկային ռեսուրսներ, ուսումնական ենթակառուցվածքներ, ուսումնական և հետազոտական գործունեության համար՝ նյութատեխնիկական բազա:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմ. առաջարկվող ծրագրի իրականացման համար համալսարանը պետք է ապահովված լինի անհրաժեշտ որակավորումով և թվակազմով դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմով:

Ուսումնամեթոդական նյութեր. ՄԿԾ-ներում պետք է ներկայացվեն դասընթացների անցկացման համար անհրաժեշտ հիմնական դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և այլ ուսումնական նյութերի ցանկը:

Տեխնիկական միջոցներ. ներառում է տեղեկատվության տեխնիկական միջոցները, տեսաձայնային, լաբորատոր սարքավորումները, տեսապաստառները և այլն:

Ուսումնական տարածքներ. ծրագրի իրականացման բոլոր փուլերում պետք է ուսանողներին հատկացվեն համարժեք լսարանային տարածքներ: Դասախոսություններին պատրաստվելու և ուսանողների հետ հանդիպելու համար դասախոսներին նույնպես անհրաժեշտ է ապահովել համապատասխան տարածքներով:

Արտադրական պրակտիկայի կազմակերպում և ղեկավարում. ՄԿԾ-ով սահմանվում են նաև մասնագիտական մի շարք կարողությունների ձևավորման և հմտությունների զարգացման կարևորագույն ծրագրային բաղադրիչ համարվող արտադրական պրակտիկաները, որոնք պետք է իրականացվեն պատշաճ մակարդակով:

Ուսումնական պլանը՝ արտահայտված կրեդիտներով և առարկայական ցանկը. ՄԿԾ-ի ուսումնական պլանը ներկայացվում է պլանի քարտեզի միջոցով, որը ցույց է տալիս կրթական վերջնարդյունքի ձեռքբերման ընթացքը և կապը առարկայական ծրագրերի հետ: Ուսումնական պլանի քարտեզի վրա հորիզոնական տողերում նշվում են առարկաները, իսկ ուղղահայաց սյունակներում՝ ակնկալվող կրթական վերջնարդյունքները: Վերջիններիս հատման վանդակում կատարվում է նշում, որը ցույց է տալիս տվյալ վերջնարդյունքը և առարկայական ծրագրի կապվածությունը:

Հաստատված է՝
«————————» ամբիոնի
«____» _____ 20 թ. —— նիստում
Ամբիոնի վարիչ՝ _____

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՆՎԱՆՈՒՄ	
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿ	
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԸ	
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	
ՖԱԿՈՒԼՏԵՏ	
ԿՈՒՐՍ	| |
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ	
ԿԱՁՄՈՂ	
ՀԵՌԱԽՈՍ	
ԷԼ. ՓՈՍՏ	
ԱՄԲԻՈՆ	
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ	
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱԿԱԼԸ

Կուրս	Դիպլոմային	Կրեդիտ	Ուսումն. շաբաթվա ժամ	Շաբաթական ժամ	Ընդհանուր ժամ	Ընդամ. թ. ժամ	Դասախ. ժամ	Գործն., լաբ. ժամ	Ինքն. աշխ. ժամ	Դասավանդի կորիզային	Քննություն	Աստիճան
II												
III												
Ընդամենը												

1. ՆԱԽԱՊԱՏԱՅՄԱՆ. Դասընթացի յուրացման համար, որպես հիմք, անհրաժեշտ են հետևյալ գիտելիքները, կարողությունները և տիրապետումները՝

Գիտելիքներ՝

Կարողություններ՝

2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՐՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

3. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

4. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ. Դասընթացի ավարտին ուսանողը պետք է՝

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	ՄԻԱՎՈՐ
Հաճախումներ	
Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում	
Ինքնուրույն անհատական աշխատանք	
7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐԿԱՆԻՇՆԵՐԻՆ /ՌԵՑՏԻՆԳՆԵՐԻՆ/ ՀԱՄԱԿԱՐԳ	

Գնահատական	Գնահատման միավորը	Գնահատման տառային նիշը

ՄԿԾ-ի պատասխանատուն պետք է ուսումնական պլանով նախատեսված առարկաները դասավանդող ամբիոններից պահանջի տվյալ ՄԿԾ-ի համար դասընթացների նկարագրերը:

Շրջանավարտների կարիերայի հնարավորությունները. կրթական ծրագրից ուսանողը պետք է հստակ տեղեկատվություն ստանա պրակտիկաների վերաբերյալ: Կրթական ծրագիրը շրջանավարտների համար պետք է հնարավորություն ընձեռի կարիերայի և ուսումը շարունակելու համար: Այսինքն, ծրագրում պետք է երևա կապը աշխատաշուկայի հետ: Անհրաժեշտ է իրականացնել ինչպես քանակական, այնպես էլ որակական հետազոտություն գործատուների և շրջանավարտների շրջանում: Միաժամանակ գործատուները պետք է ներգրավվեն կրթական ծրագրերի մշակման գործընթացներում:

Ծրագրային կողմնորոշիչների օգտագործումը. կրթական ծրագրերը պետք է համապատասխանեն ներքին և արտաքին չափորոշիչներին, որոնք ներկայացվում են ծրագրի մասնագրում: Արտաքին կողմնորոշիչներ են հանդիսանում.

1. ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքը
2. Բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչները
3. Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի որակավորումների շրջանակը
4. ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային և ոլորտային (սեկտորիալ) շրջանակները
5. Մասնագիտական կազմակերպությունների, օրենսդիր և ոլորտը կարգավորող մարմինների պահանջները և ցուցումները (եթե այդպիսիք կան).
6. Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի ծրագրային հավատարմագրման չափանիշները
7. Արտերկրի առաջավոր բուհերի կրթական ծրագրերը և առնչվող այլ փաստաթղթեր:

Որպես ներքին կողմնորոշիչներ կարող են հանդիսանալ Համալսարանի ռազմավարական ծրագիրը, կրթական ծրագրերին առնչվող համալսարանում գործող կարգերը, այլ պաշտոնական փաստաթղթեր:

Մասնագիտության կրթական ծրագրի կառուցվածքը

- ծրագրի հայեցակարգը և նպատակները,
- ծրագրի համապատասխանությունը հաստատության առաքելությանը և ռազմավարական պլանին,
- ծրագրի խնդիրները, առարկան և մոդուլները,
- ծրագրի, ինչպես նաև յուրաքանչյուր դասընթացի/մոդուլի ակնկալվող կրթական արդյունքները,
- պլանի համապատասխանությունը նշված նպատակներին և ակնկալվող կրթական արդյունքներին,
- ուսուցման ձևը և ECTS կրեդիտներով արտահայտված բեռնվածությունը,
- կրթական արդյունքներին համարժեք դասավանդման և ուսումնառության մեթոդները,
- կապը հաստատության այլ ծրագրերի հետ,

- ապագա գրաղվածության (աշխատանքի տեղավորման հնարավորության) խնդիրները,
- ծրագրի կառավարման խնդիրները,
- ծրագրի համապատասխանությունը Հայաստանի, եվրոպական և համաշխարհային աշխատաշուկաների պահանջներին,
- մարդկային անհրաժեշտ ռեսուրսների ներգրավումը,
- անհրաժեշտ ինֆորմացիոն ռեսուրսները,
- ծրագրի ազդեցությունը ՄՈՒՀ-ի նյութատեխնիկական ենթակառուցվածքների զարգացման վրա,
- անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ներգրավումը,
- այլ ՄՈՒՀ-երի կողմից առաջարկվող համանման/հարակից ծրագրերի միջավայրային վերլուծությունը,
- ծրագրի պահանջվածությունը սովորողների կողմից,
- ծրագրի վերաբերյալ համապատասխան շահակիցների և մասնագիտական շրջանակի հետ խորհրդակցությունների անցկացումը,
- սովորողների գնահատման արդարացի, հիմնավորված և չափորոշիչներին համապատասխանող ներդրված մեխանիզմները,
- ՄՈՒՀ-ի գործունեության դադարեցման դեպքում սովորողների շահերի պաշտպանության մեխանիզմները,
- սովորողների ընդունելության, առաջադիմության և փոխադրումների բավարար մեխանիզմները, ՈԱՇ-ին համապատասխան դիպլոմի հավելվածը և այլն:

Կրթական ծրագրի նախագծման, մշակման, իրականացման և որակի շարունակական բարելավման գործընթացների շրջափուլերը



ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. ՆԱԽԱԲԱՆ

Ավանդական բժշկության համալսարանն (այսուհետ՝ ԱԲՀ) իր ուսումնական և կրթական ծառայությունների տրամադրման գործընթացում առաջնորդվում է ՀՀ Բարձրագույն և հետբուհական կրթության մասին օրենքով, Որակավորումների ազգային շրջանակով և կրթության որակի ու աշխատաշուկայի պահանջներին համապատասխանության սկզբունքներով:

Կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկումը ենթադրում է պարբերաբար ուսումնասիրություն և ինքնագնահատում, որը նպաստում է հետագա ռազմավարական ուղղությունների ձևավորմանը և կրթական գործընթացի բարելավմանը:

Պարբերական վերանայման գլխավոր նպատակն է կրթական ծրագրերի արդյունավետության և որակի բարձրացումը, դրանց համապատասխանությունը ԱԲՀ-ի և տվյալ կրթական ծրագրի առաքելությանը:

Մշտադիտարկման և պարբերական վերանայման խնդիրն է ուսումնասիրել և գնահատել կրթական ծրագիրը, ձեռքբերված ուսումնական վերջնարդյունքները, օգտագործվող դասավանդման, ուսուցման մեթոդաբանությունը և դրա արդյունավետությունը, գնահատման համակարգը: SWOT վերլուծություն հիման վրա մշակել համապատասխան միջոցառումների ծրագիր կրթական ծրագրի հետագա զարգացման համար:

Վերոնշյալ նպատակներն ու խնդիրներն իրագործելու համար վերանայման գործընթացը ենթադրում է հետևյալ փուլերը.

1. Ինքնագնահատման գործընթացների ժամանակացույցի կազմում և իրականացում:
2. Բարելավման գործողությունների ծրագրի մշակում, համաձայն ինքնագնահատման արդյունքների:
3. Ինքնագնահատման արդյունքների և գործողությունների ծրագրի քննարկում:
4. Բարելավման գործողությունների ծրագրի իրագործում:
5. Արտաքին փորձագիտական գնահատում:

Սույն ընթացակարգի կարևոր շահառուն ԱԲՀ-ի ներքին և արտաքին շահակիցներն են՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմը, ներկայում սովորող և պոտենցիալ ուսանողները:

Սույն ընթացակարգի շրջանակներում կիրառվում են հետևյալ դրույթները.

1. ***<u>Կրթական ծրագրի մշտադիտարկում</u>***. կրթական ծրագրի մշտադիտարկումը ենթադրում է վերջինիս պարբերաբար ուսումնասիրություն՝ համապատասխան տվյալների և հետադարձ կապի միջոցով ձեռք բերված տեղեկատվության միջոցով:

2. ***Կրթական ծրագրի վերանայում***. կրթական ծրագրի վերանայումը ենթադրում է վերջինիս բոլոր բաղկացուցիչ մասերի պարբերական խորը ուսումնասիրություն:

2. ՆՊԱՏԱԿ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

Կրթական ծրագրի մշտադիտարկման և ընթացիկ վերանայման նպատակն ու խնդիրներն են.

- Աջակցել կրթական ծրագրի և կրթական գործընթացի որակի և չափանիշների բարելավմանը:
- Ապահովել մասնագիտական կրթական ծրագրերի արդիականությունը:
- Ապահովել դասավանդման և ուսուցման ակադեմիական չափանիշները և որակը՝ պահպանելով ու բարելավելով գործընթացը:
- Գնահատել ուսանողների կողմից ձեռքբերված կրթական վերջնարդյունքների մակարդակը:
- Կանխատեսել կրթական ծրագրերի հնարավոր պահանջարկը:
- Ապահովել կրթական ծրագրի համապատասխանությունը ներկայիս և պոտենցիալ ուսանողների, գործատուների պահաջներին:
- Ապահովել համապատասխան միջոցառումների և ծրագրերի առկայությունը՝ լավագույն փորձը տարածելու, իսկ բացթողումները շտկելու նպատակով:

3. ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Կրթական ծրագրերի մշտադիտարկումն ու վերանայումը պետք է.

- ապահովի զարգացում և բարելավում,
- ընդգրկվի շարունակական որակի ապահովման գործընթացներում,
- խրախուսի գործընթացների կազմակերպման թիմային մոտեցմանը,
- գործընթացներում ընդգրկի կրթական ծրագրերի բոլոր շահառուներին:

4. ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Կրթական ծրագրերի մշտադիտարկումը և վերանայումը պետք է.

- լինի հիմնավորված և փաստերի վրա հիմնված,
- իրականացվի խելամիտ ժամանահատվածում,
- չկրկնի մշտադիտարկման և վերանայման մյուս գործընթացները,
- իրականացվի փոխաջակցության մթնոլորտում,
- հնարավորություն ստեղծի բոլոր շահառուներին ցուցաբերել քննադատական և վերլուծական մոտեցում,
- լինի պատշաճ կազմակերպված և թափանցիկ,
- կիրառի հստակ և հիմնավորված չափանիշներ:

5. ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կրթական ծրագրերի մշտադիտարկում.

5.1.1. Կրթական ծրագրերի մշտադիտարկումը իրականացվում է մեկնարկից առնվազն երկու տարի անց՝ մասնագիտության կրթական ծրագրերի պատասխանատուի կողմից:

5.1.2. ՄԿԾ-ի պատասխանատուն մշտադիտարկման գործընթացը սկսելուց առաջ ուսումնական տարվա սկզբին կազմում է աշխատանքային խումբ և մշտադիտարկման ժամանակացույց:

5.1.3. Մշտադիտարկումը իրականացվում է դասալսումների, ուսանողների և դասախոսների հետ հանդիպում քննարկումների, խորհրդակցությունների, ուսանողներից և դասախոսներից հարցաթերթիկների միջոցով ստացված տեղեկատվության ուսումնասիրության միջոցով:

5.1.4. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին՝ գիտխորհրդի նիստի ժամանակ, ՄԿԾ-ի պատասխանատուն ներկայացնում է հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ: Հաշվետվությունը իր մեջ պարտադիր պետք է ներառի՝ վերլուծված տեղեկատվությունը, վիճակագրական տվյալներ, առաջարկությունները, դիտողությունները և ձեռքբերումները, ինչպես նաև բարելավման ուղիները:

5.1.5. Հաշվետվության վերաբերյալ որոշումը անհրաժեշտության դեպքում կարող է լսվել հաջորդ գիտխորհրդի նիստին՝ հերթական ուսումնական տարվա ավարտին:

5.2. Կրթական ծրագրերի վերանայում.

5.2.1. Կրթական ծրագրերի ընթացիկ վերանայումը իրականացվում է յուրաքանչյուր 3-4 տարին մեկ: Որոշ հանգամանքների առկայության պարագայում կրթական ծրագրի վերանայումը կարող է հետաձգվել՝ հիմք ընդունելով ՄԿԾ-ի պատասխանատուի հիմնավորումը: Հետաձգման վերաբերյալ որոշումը պետք է ներկայացվի ՈԱ հանձնաժողով և հաստատվի վերջինիս կողմից:

5.2.2. Վերանայման գործընթացի մեկնարկից մեկ ամիս առաջ Որակի ապահովման բաժնի ղեկավարը տեղեկացնում է ԱԲՀ-ի ռեկտորին: Ռեկտորի հրամանով ծանուցում է ուղարկում պատասխանատու ստորաբաժանումներին՝ կրթական ծրագրերի վերանայման գործընթացը սկսելու վերաբերյալ:

5.2.3. Վերանայման գործընթացի մեկնարկից առաջ Որակի ապահովման բաժնի ղեկավարը կազմակերպում է խորհրդատվություն համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների համար՝ կրթական ծրագրերի վերանայման ընթացակարգերի, գործընթացների, անհրաժեշտ փաստագրման վերաբերյալ:

5.2.4. Խորհրդակցության արդյունքում մշակվում է վերանայման ժամանակացույցը և սահմանվում են պատասխանատուներ:

5.2.5. Կրթական ծրագրի վերանայումն իրականացնելու համար նախապատրաստվում է հաշվետվություն, որն ամփոփում է նախորդ տարիներին իրականացված տարեկան ուսումնասիրությունների հաշվետվությունները և կրթական ծրագրի վերանայմանն առնչվող այլ փաստաթղթերը և ներկայացվում է ՈԱՀ ուսումնասիրության համար:

5.2.6. Ֆակուլտետի դեկանը, հիմք ընդունելով վերոնշյալ հաշվետվությունը, կազմակերպում է քննարկումներ ուսանողների, վերջին երկու տարիների ընթացքում ավարտած ընտրանքային շրջանավարտների, դասախոսների և կրթական գործընթացի կազմակերպման մասնակիցների հետ: Ըստ անհրաժեշտության՝ կարող են հրավիրվել նաև գործատուներ և վերանայվող մասնագիտական ոլորտի արտաքին փորձագետներ:

5.2.7. Ուսումնասիրությունների արդյունքում ՄԿԾ-ի պատասխանատուն պատրաստում է հաշվետվություն արդյունքների վերաբերյալ, կրթական ծրագրերի առաջարկվող փոփոխությունների նախագիծ և իրագործման միջոցառումների պլան:

5.2.8. Առաջարկվող փոփոխությունները և միջոցառումները կարող են դասակարգվել.

- **Էական՝** կրթական ծրագրի կասեցման կամ հետագա վերակառուցման:
- **Ցանկալի՝** ընդհանուր առմամբ թերություններ առկա չեն, սակայն ցանկալի է միջոցառումներ իրականացնել կրթական գործընթացի կազմակերպման որակը բարձրացնելու համար:
- **Օրինակելի՝** կրթական ծրագրի կազմակերպման գործընթացում թերություններ չեն հայտնաբերվել և որպես լավագույն փորձ՝ երաշխավորվում է տարածման:

5.2.9. ՄԿԾ-ի պատասխանատուն փոխանցում է վերոնշյալ փաստաթղթերը Գիտական խորհրդին կից ՈԱ հանձնաժողովին՝ որոշում կայացնելու նպատակով:

5.2.10. Գիտական խորհրդին կից ՈԱՀ-ի կողմից որոշումը կայացնելուց հետո ՄԿԾ-ի պատասխանատուն կազմակերպում է ամփոփող խորհրդակցություն հետագա քայլերը քննարկելու և միջոցառումների ծրագիրը իրականացնելու համար:

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՈՒՆ

1.Պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման հիմնական գործոնները, պաշտոնակալումը և առաջխաղացումը

Դասախոսական կազմի պլանավորումն ու տարակարգումն իրականացվում են այնպես, որ բոլոր կրթական ծրագրերն ու դասընթացներն ապահովվեն բավարար թվով որակյալ դասախոսներով, և ձևավորվի անհրաժեշտ ռեսուրս՝ կրթական ծրագրերի ապահովման և շարունակական նորացման ու արդիականացման համար: Այդ առումով կարևորվում են հետևյալ հիմնական գործոնները.

- Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման հաստատված կարգը և այն իրականացնելու հստակ գործընթացները, որոնք ներառում են կադրերի ընտրությունը և պաշտոնակալումը:
- Կադրերի ընտրության սահմանված չափանիշները՝ մասնագիտական կրթությունը, որակավորումը, մասնագիտացումը և դրանց համապատասխանությունը դասավանդման առարկայական ոլորտին, աշխատանքային փորձը և մանկավարժական ձիրքի առկայությունը, գիտական աստիճանը, կոչումը և այլն:
- Դասախոսական կադրերի մրցութային ընտրությունը, որը երաշխավորվում է իրականացնել մրցութային չափանիշներին բավարարելու հավաստող փաստաթղթերի մանրակրկիտ ուսումնասիրության և հարցազրույցի անցկացման արդյունքների ու հետագա հնարավոր փորձաշրջանի սահմանման միջոցով (կամ՝ միայն առաջին երկուսով):
- Նոր աշխատողների պաշտոնակալումն իրականացվում է դասախոսական կազմի տարբեր տարակարգերի (ասիստենտ, դասախոս, դոցենտ, պրոֆեսոր) համար սահմանված աշխատանքային բնութագրերին համապատասխան:
- Առաջխաղացումներն ավտոմատ կերպով չեն իրականացվում: Առաջխաղացման մասին որոշումները հիմնվում են դասավանդման կատարողականի, մասնագիտական զարգացման, հետազոտական հրատարակումների, ամբիոնի աշխատանքներում վերջինիս ունեցած ներդրման, ինչպես նաև ակադեմիական համայնքին մատուցած ծառայությունների հիման վրա:
- ՊԴ անձնակազմի անդամին անհրաժեշտ է գնահատել ոչ միայն անցյալի կատարողականի, այլև ապագայում վերջինիս պոտենցիալի հաշվառմամբ:
- Առաջխաղացման վերաբերյալ արդարացի որոշումներ կայացնելու համար համալսարանը հաշվի է առնում մասնագիտական զարգացման, լսարանի (ուսանողների կողմից դասախոսի գնահատման) ու գործընկերների գնահատման, վարչական կազմի

գնահատականների արդյունքները, մեկնաբանությունները, ինչպես նաև ակադեմիական համայնքին մատուցած ծառայությունները:

- Առաջխաղացման նպատակով թեկնածուի գնահատման պարտականությունը պատկանում է պրոռեկտորին, որի երաշխավորությամբ էլ այն հանձնվում է ռեկտորին: Վերջինս էլ իր հերթին երաշխավորագիրը ներկայացնում է գիտական խորհրդին՝ վերջնական հաստատման համար:
- Դասախոսական կազմի աշխատանքի վարձատրության նորմերը և դրանց սահմանման մեխանիզմները պետք է հաշվի առնեն աշխատողի մասնագիտական որակավորման մակարդակը և խրախուսեն դասավանդման որակի շարունակական բարելավումը:

2. Պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատումը

Բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացում առանցքային դեր է վերապահված բուհի աշխատակազմին, նրա գիտելիքներին, կարողություններին ու հմտություններին, որոնց կառավարումը բուհի ռազմավարական պլանավորման կարևորագույն խնդիրներից է: Այս տեսանկյունից բուհը, աշխատակազմի արդյունավետ կառավարման նպատակով, պետք է լիարժեք տեղեկատվություն ունենա սեփական մարդկային ներուժի, նրա գիտելիքների, կարողությունների, հմտությունների, անձնային, մասնագիտական, կազմակերպչական որակների և կոմպետենցիաների մասին՝ ապահովելու համար իր գործունեության շարունակական զարգացումն ու որակի բարելավումը: Հետևաբար, անհրաժեշտ է ճիշտ գնահատել ու բավարարել մարդկային ներուժի անհատական կարիքները՝ տվյալ ոլորտնական հաստատության կարիքներին համապատասխան, և յուրաքանչյուրին ընձեռել շարունակաբար սովորելու ու զարգանալու հավասար հնարավորություններ:

Ինչպես նշում է հայտնի տնտեսագետ Ե. Ամիելբաումը. «Մարդիկ լավ առաջադիմություն և բարձր կատարողականություն են դրսևորում, երբ ունեն կամ կարող են ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, ստանում են ճիշտ խթաններ և խրախուսումներ, ունեն համատեղ որոշումներ կայացնելու և տվյալ հաստատության կառավարմանը մասնակցելու հնարավորություններ»:

Դասախոսի գործունեության գնահատումը բուհի որակի ներքին ապահովման և շարունակական բարելավման հիմնական մեխանիզմներից է, որի նպատակն է խթանել ՊԴ կազմի մասնագիտական զարգացումը, դասավանդման, ուսումնամեթոդական, գիտահետազոտական և ստեղծագործական գործունեության որակը, ուսանողների հետ տարվող արտալսարանային աշխատանքների կազմակերպումը:

ՊԴ կազմը գնահատվում է երեք հիմնական ոլորտներում՝

- *դասավանդում և ուսումնամեթոդական գործունեություն,*
- *գիտահետազոտական գործունեություն,*
- *հասարակական և վարչական գործունեություն:*

ՊԴ կազմի գնահատումը կատարվում է ուսումնական գործընթացում ներգրավված չորս հիմնական շահակիցների՝ **ուսանողների, գնահատվող դասախոսի, գործընկեր դասախոսների և անմիջական ղեկավարի մասնակցությամբ**՝ սահմանված գնահատման չափանիշների օգնությամբ, որոնց արդյունքներն այնուհետև ընդհանրացվում են և քննարկվում:

ՊԴ կազմի գործունեության գնահատումն իրականացվում է բազմակողմ ձևաչափով կրթական միջավայրի հենքային բոլոր բաղադրիչների ընդգրկմամբ՝ ապահովելով գնահատման օբյեկտիվությունն ու անաչառությունը:

Գնահատման առավել հավաստի արդյունքներ ստանալու նպատակով օգտագործվում են գնահատման ինչպես **անհատական** (ինքնագնահատումը, գնահատումը անմիջական ղեկավարի կողմից), այնպես էլ **կոլեկտիվ** (գործընկերային գնահատումը, ուսանողների կողմից) եղանակները:

Ինքնագնահատման ձևաչափը ներառում է դասախոսի կողմից իր աշխատանքային պայմաններն ու միջավայրը վերլուծելու և գնահատելու, ինչպես նաև իր կրթական գործունեության բարելավումը խոչընդոտող միջավայրային գործոնները բացահայտելու բաղադրիչները:

Անմիջական ղեկավարի գնահատումը (օրինակ՝ ամբիոնի վարիչ) դասախոսի գործունեության կատարողականի և արդյունավետության գնահատումն է, որի ընթացքում վերլուծվում են դասախոսի աշխատանքային կարգապահությունը, կոլեկտիվում համագործակցելու ունակությունը, դասավանդման մեթոդները և որակը, անհատական աշխատանքները ուսանողների հետ, գիտահետազոտական գործունեության արդյունքները և այլն:

Գործընկերային գնահատումը կատարվում է այն ուսումնական ստորաբաժանման ՊԴ կազմի անդամների կողմից, որտեղ դասավանդում է գնահատվող դասախոսը: Գնահատումն իրականացվում է գործընկեր դասախոսների փոխադարձ դասայցելությունների, անմիջական ղեկավարի կողմից դասալսումների և դասախոսի կատարողականը հիմնավորող փաստաթղթային փաթեթի ուսումնասիրման միջոցով:

Ինչպես նշեցինք, կոլեկտիվ գնահատման եղանակներից մեկն էլ ուսանողական հարցումներն են (կիսամյակային կամ ուստարվա պարբերականությամբ), որոնք ամփոփում են նրանց ունկնդրած դասընթացների արդյունքները: Հարցաթերթիկներում ներառված հարցերի բովանդակությունը հնարավորություն է տալիս գնահատելու ինչպես դասախոսի մասնագիտական գիտելիքների մակարդակը, այդ գիտելիքները արդյունավետ կերպով ուսանողներին փոխանցելու նրա ունակությունները:

ԱԲՀ-ն դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների համակարգը ներդրել է 2012 թվականին: Ուսանողական հարցման արդյունքներն օգտագործվում են՝

- աջակցելու դասախոսներին վերլուծելու, զարգացնելու իրենց դասավանդման մոտեցումները և կիրառվող մեթոդները,
- դասախոսների պաշտոնակալման, առաջխաղացման և խրախուսման նպատակով:

Բազմակողմ գնահատման արդյունքներն ամփոփվում են մեկ ընդհանուր փաստաթղթում, որը տալիս է դասախոսի ընդհանրացված (քանակական և որակական) պատկերը գնահատման տվյալ ժամանակահատվածի համար: Ամփոփումն իրականացնելուց հետո բուհի ղեկավար կազմն այդ արդյունքների հիման վրա ընդունում է տարաբնույթ վարչական որոշումներ, և այդ արդյունքները հիմք են հանդիսանում դասախոսի աշխատանքային պայմանագրի շարունակման կամ լուծման, պաշտոնուղղու զարգացման կամ պաշտոնեական աճի, նպատակային վերապատրաստման կամ կատարելագործման, ինչպես նաև նյութական խրախուսման կամ պարգևատրման համար:

3. ՊԴ կազմի խրախուսման համակարգ

Բուհի ՊԴ կազմի խրախուսման համակարգի նպատակն է՝ խթանել դասախոսների մասնագիտական զարգացումը, դասավանդման հմտությունների և մասնագիտական կարողությունների կատարելագործումը, գիտահետազոտական աշխատանքների ակտիվությունը, արտալսարանային և խորհրդատվական աշխատանքներն ուսանողների հետ, ուսումնամեթոդական և գիտամեթոդական աշխատանքները, ակտիվ մասնակցությունը բուհի և նրա ստորաբաժանումների գործունեությանն ու դրանց արդյունավետության բարձրացմանը: Այլ խոսքով՝ խրախուսման համակարգը ամբողջությամբ նպատակաուղղված է ՊԴ կազմի կատարողականության շարունակական բարելավմանը:

4. Պարգևատրումների կիրառումը

Պարգևատրման մեխանիզմի հիմքում աշխատողի կատարողականն ու մասնագիտական որակավորումն է, մարդկային կարողության կարևորումն ու նպատակային խրախուսումը: Պարգևատրումները՝ որպես աշխատանքային գործունեության խթաններ, տարբերվում են իրենց ազդեցության տեսակներով և բնութագրերով:

Խթանման ձևերն են՝ բարոյական, սոցիալ-հոգեբանական, վարչական, նյութական խթանման ձևեր և ինքնախթանում:

Բարձրագույն կրթության ոլորտում ներկայիս գործող պարգևատրման համակարգում աշխատողների համար կիրառվում են խրախուսանքներ՝ աշխատանքային պարտականությունների օրինակելի կատարման, աշխատանքի արդյունավետ իրականացման և արդյունավետության բարձրացման, աշխատանքում նորամուծությունների և այլ ձեռք-

բերումների, ինչպես նաև գիտահետազոտական ու հասարակական աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար:

ՀՀ բուհերում, այդ թվում ԱԲՀ-ում խրախուսումը հայտարարվում է ռեկտորի հրամանով և դրա մասին տեղեկացվում է բուհի կոլեկտիվին: Գիտական խորհուրդը նույնպես ունի աշխատողին պարգևատրելու լիազորություններ: ԱԲՀ-ի դասախոսների խրախուսման կարգում սահմանված են պարգևատրման տեսակները, դրանք շնորհելու հիմքերը, շնորհման իրավասություններն ու մեխանիզմները:

Յուրաքանչյուր դասախոս պետք է գիտակցի, որ գործնականում իրավունք ունի պարգևատրվելու իր արդյունավետ աշխատանքի համար և արժանանալու ղեկավարության գնահատականին:

Այսպիսով՝ խրախուսման և պարգևատրման մեխանիզմների առկայությունը և դրանց կիրառությունը բուհական համակարգում հնարավորություն են տալիս աշխատակազմի յուրաքանչյուր անդամին զարգացնելու իր ներուժը և ձգտելու առավել բարձր կատարողականության: Ռաումնական հաստատությունը, ստեղծելով նման միջավայր, ոչ միայն իր աշխատողներին մասնագիտական ինքնադրսևորման հնարավորություն է ընձեռում, այլև նպաստում է կրթության որակի և արդյունավետության բարձրացմանը՝ ամրապնդելով իր հեղինակությունը մրցակցային դաշտում:

5. Վերապատրաստումներ և զարգացում

Վերապատրաստումն աշխատողների այն հմտությունները զարգացնելու գործընթացն է, որոնք անհրաժեշտ են ընթացիկ գործունեությունն իրականացնելու համար, իսկ աշխատողի մասնագիտական զարգացումը միտված է գիտելիքների և հմտությունների զարգացմանն ու բարելավմանը ներկա և ապագա աշխատանքների իրականացման համար:

Մասնագիտական զարգացումը շարունակական դինամիկ գործընթաց է, որը նպատակաուղղված է աշխատողի գործունեության առաջընթացի ապահովմանը, նրա գիտելիքների, կարողությունների, հմտությունների զարգացմանն ու բարելավմանը, ինչպես նաև տվյալ բարձրագույն ռաումնական հաստատության կայունությանը, ռազմավարական նպատակների ու հեռահար ծրագրերի իրականացմանը: Իսկ վերապատրաստումը սահմանվում է որպես մասնագիտական զարգացման բաղադրիչներից մեկը, որն ունի հստակ սահմանված ժամկետ և որոշակի ուղղվածություն՝ միտված կոնկրետ գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացմանը:

Գիտությունը զարգանում է, և, ինչպես իրավացիորեն փաստում են բազմաթիվ գիտնականներ, «հինգ տարում գիտելիքների հիսուն տոկոսը հնանում է», ուստի բուհերը պետք է շարունակաբար համապատասխան հնարավորություններ ընձեռեն իրենց աշխատակիցներին ծանոթանալու ոլորտի նորագույն գիտելիքներին՝ թարմացնելով և նորացնելով սեփական գիտելիքների պաշարը:

Վերապատրաստումն ու մասնագիտական զարգացումը ռազմավարական նշանակություն ունեն այն հաստատությունների համար, որոնք մարդկային ներուժը դիտարկում են որպես ամենաարժեքավոր ռեսուրս և իրենց կատարողականի շարունակական բարելավման գործընթացներում կատարվող ամենակարևոր ներդրում:

Բարձրագույն ուսումնական հաստատության աշխատողների պաշտոնեական աճն անմիջականորեն կապված է տվյալ բուհի նպատակների արդյունավետ իրականացման հետ, հետևապես, բուհը պետք է նախաձեռնող և հետևողական լինի իր աշխատակազմի շարունակական ուսումնառության և մասնագիտական աճի համար բարենպաստ միջավայրի ու պայմանների ապահովման խնդրում: Այն պետք է որդեգրի աշխատողների խրախուսման ճկուն համակարգեր, որոնք աշխատողներին կմոտիվացնեն հնարավորինս բացահայտել սեփական ներուժն ու մտավոր կապիտալը և առավելագույն ջանքեր գործադրել՝ ելնելով ինչպես անձնական, այնպես էլ բուհի կարիքների բավարարման և գործունեության հետագա բարելավման անհրաժեշտությունից:

Եվ վերջապես, բուհերն էլ ակնկալում են իրենց մարդկային ռեսուրսների վերապատրաստման և մասնագիտական զարգացման մեջ կատարված ներդրումների վերադարձը համապատասխան տեսական և գործնական գիտելիքների տեսքով, որոնց կիրառումը նպատակառղված կլինեն ամենից առաջ տվյալ բուհի ռազմավարական խնդիրների արդյունավետ լուծմանը:

Այսպիսով, գնահատելով և կիրառելով իր աշխատակիցների մարդկային և մասնագիտական ներուժը, ինչպես նաև ներդնելով աշխատակիցների մասնագիտական զարգացման խթանման մեխանիզմներ՝ բուհը կարող է ապահովել գործունեության կատարողականության բարձր ցուցանիշներ և ուրվագծել զարգացման նորանոր հեռանկարներ:

Այսպիսով, ԱԲՀ-ում դասախոսական կազմի գործունեության գնահատումն իրականացվում է Համալսարանի առաքելությանն ու նպատակներին համապատասխան՝ հստակ սահմանված և հրապարակված ընթացակարգերով ու չափանիշներով, որոնք տեղադրված են համալսարանի պաշտոնական կայքում:

1. Ավանդական բժշկության համալսարանում դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման կանոնակարգ
2. Դասախոսների կարիքների վերհանման և գնահատման հարցման կանոնակարգ և հարցաթերթիկ
3. Դասընթացի արդյունավետության գնահատման կանոնակարգ և հարցաթերթիկ
4. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական ծանրաբեռնվածության հաշվարկի նորմեր
5. ՊԴ և ուսումնաօժանդակ անձնակազմի վերապատրաստման կանոնակարգ
6. ԱԲՀ-ի դասախոսների խրախուսման կարգ

ԲԵՆՉՄԱՐՔԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Ավանդական բժշկության համալսարանի (Այսուհետ ԱԲՀ) գործունեության ռազմավարության գերակա ուղղություններից են նրա մրցակցային կարողությունների զարգացումը և կրթության որակի ապահովումը: Վերջին տարիներին միջազգային պրակտիկայում լայն տարածում է ստացել կրթության որակի գնահատման նոր գործիքի՝ բենչմարքինգի կիրառումը:

Բենչմարքինգը բարձրագույն կրթության ոլորտում ենթադրում է տարբեր բուհերի լավագույն ռազմավարությունների ուսումնասիրություն, առաջավոր փորձի համեմատական վերլուծություն՝ կրթական ծառայությունների ներքին և արտաքին շուկաներում բուհի ներդրումային գրավչությունը բարձրացնելու նպատակով:

ԱԲՀ-ի ուսումնական և կառավարման գործընթացների բենչմարքինգի իրագործումը հնարավորություն է տալիս գնահատելու կայացված որոշումների, ընտրված ռազմավարական ուղիների արդյունավետությունը և նպատակահարմարությունը, ինչպես նաև ապահովել համալսարանի շարունակական բարելավումը:

Վերջին տարիներին համալսարանը հաջողությամբ համագործակցում է միջազգային տարբեր կազմակերպությունների հետ, հետևաբար, ստեղծված են բավարար նախադրյալներ արդյունավետ բենչմարքինգի և փորձի փոխանակման համար:

Սույն փաստաթուղթը նկարագրում է ԱԲՀ բենչմարքինգի (համեմատական վերլուծության) ընթացակարգը: Այն մշակվել է՝ առաջնորդվելով ՀՀ բարձրագույն և հետբուհական կրթության օրենքով, ԱԲՀ-ի զարգացման ռազմավարությամբ, որակի ապահովման եվրոպական չափանիշներով և չափորոշիչներով:

1. **Բենչմարքինգի քաղաքականության նպատակն է՝** ԱԲՀ-ի մրցունակության որոշումը, աշխատանքի լավագույն մեթոդների, թույլ կողմերի բացահայտումը, համալսարանի ստորաբաժանումների կատարողականի ցուցանիշների և կրթության որակի ապահովման համապատասխան մեխանիզմների բարելավումը՝ ազգային և միջազգային փորձերի ուսումնասիրության և համեմատության, լավագույն փորձի բացահայտման միջոցով:
2. **ԱԲՀ-ի բենչմարքինգի քաղաքականության հիմնական խնդիրներն են.**

   1) Գործունեության վերլուծության միջոցով բացահայտել համալսարանի ուժեղ և թույլ կողմերը (SWOT վերլուծություն):

   2) Ներքին և արտաքին շահակիցների կարծիքները և ակնկալիքները հաշվի առնելով՝ առանձնացնել այն գործընթացները, որոնք պետք է բարելավել:

   3) Ուսումնասիրել բենչմարքինգ իրականացնող լավագույն բուհերի գործընթացները:

4) Բենչմարքինգ իրականացնելու նպատակով ուսումնական հաստատություններից հավաքագրել համապատասխան տեղեկատվություն:

5) Վերլուծելով առաջատար բուհերի բենչմարքինգի տվյալները, նոր մեթոդները և տեխնոլոգիաները՝ տեղայնացնել և ներդնել համալսարանի ուսումնական և կառավարման գործընթացներում:

6) Ստացված տվյալները դարձնել հենակետային՝ նոր բենչմարքինգ իրականացնելու ժամանակ:

3. **Բենչմարքինգի իրականացման սկզբունքներն են.**
   - համապատասխանություն ԱԲՀ-ի ռազմավարական նպատակներին և խնդիրներին,
   - տեղեկատվության փոխանակման ընթացքում գաղտնիության պահպանում, միայն բենչմարքինգի նպատակներին համապատասխան կիրառում,
   - բենչմարքինգի ընթացքում մշակված տեղեկատվության նկատմամբ հեղինակային իրավունքների պահպանում:
4. **Համալսարանի կողմից իրականացվող բենչմարքինգի հիմնական ձևերը.**
   1. ***Ներքին բենչմարքինգ.*** համալսարանի ստորաբաժանումների գործունեության համադրություն, առաջավոր փորձի բացահայտում և տարածում (անհրաժեշտ է որակի ներքին ապահովման համակարգի մշտադիտարկման և ապահովման համար):
   2. ***Միջբուհական բենչմարքինգ.*** նմանատիպ համալսարանների գործունեության ուսումնասիրություն որոշակի չափանիշների, լավագույն փորձի մեթոդների ներդրում (կարևոր է որոշել, թե համալսարանը այլ բուհերի հետ ինչ նմանություններ ունի, կատարել համեմատական վերլուծություն և անհրաժեշտության դեպքում ներդնել այլ համալսարանների լավագույն փորձը՝ հաշվի առնելով համալսարանի գործունեության սահմանափակումները և առանձնահատկությունը):
   3. **Բենչմարքինգի ընթացակարգ**
      - ***Անցկացման ոլորտի ընտրություն.*** անհրաժեշտ է կատարել ուսումնասիրություններ, թե համալսարանի որ գործընթացն է ենթակա վերափոխման՝ ուսումնական, գիտական գործընթացները, կրթական ծրագրեր և այլն:
      - **Բենչմարքինգի տիպի որոշում.** ներքին կամ միջբուհական:
      - **Բենչմարքինգի իրականացման գործընկեր կազմակերպության ընտրություն**
      - **Պատասխանատուներ.** կոնկրետ ոլորտային պատասխանատուների նշանակում, պլան գրաֆիկի կազմում և հաստատում (նպատակ, խնդիրներ, իրականացման ժամկետներ և գործողությունների պլան, անհրաժեշտ ռեսուրսներ):
      - **Բենչմարքինգի պլանի մշակում.**
        - բենչմարքինգի նպատակը և խնդիրները,
        - իրականացման ժամկետները և գործողությունների պլանը,
        - իրականացման համար ռեսուրսների առկայությունը,

- բենչմարքինգի անցկացման մեթոդաբանություն (հարցաթերթեր, հարցազրույցներ, աշխատանքային այցեր և այլն),
- նախագծի շրջանակը,
- բենչմարգինգի ենթական օբյեկտի կամ գործընթացի ցուցանիշները, որոնք ենթակա են չափման,
- ծրագրի պատասխանատուները և համակարգողները:

Բենչմարքինգի իրականացում. Ընտրված համալսարանների շրջանակներում լավագույն փորձի ուսումնասիրություն և վերլուծություն:

- Բենչմարքինգն իրականացնող ստորաբաժանումը նախքան գործընթացը սկսելը համալսարանի պրոռեկտորին է ներկայացնում պլանավորվող բենչմարքինգի մասին տեղեկատվություն համապատասխան հիմնավորմամբ:
- Բենչմարքինգի գործընթացի իրականացման համար ֆինանսական ռեսուրսների անհրաժեշտության պարագայում այն նախապես համաձայնեցվում է ԱԲՀ-ի ռեկտորի հետ: Անհրաժեշտության դեպքում նախապես կազմվում է նախահաշիվ և ներկայացվում ռեկտորի հաստատմանը:
- Վերոնշյալ փաթեթը փոխանցվում է որակի ապահովման հանձնաժողովին՝ ԱԲՀ-ի ռազմավարական, զարգացման և որակի ապահովման խնդիրների հետ համապատասխանության վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով:
- Դրական կարծիքի հիման վրա, ՈԱՀ-ի կողմից գրավոր համաձայնություն ստանալուց հետո, համագործակից հաստատության/հաստատությունների հետ կնքվում է Հուշագիր՝ բենչմարքինգի առարկայի/առարկաների, փոխանակվող տեղեկատվության շրջանակի, յուրաքանչյուր հաստատության ներկայացուցիչների իրավասությունների վերաբերյալ:
- Բենչմարքինգի գործընթացը պետք է արձանագրվի ԱԲՀ-ի ՈԱՀ-ի կողմից:

Արդյունքների ներկայացում հաշվետվության տեսքով.

- Տեղեկատվության համադրության և համեմատության հիման վրա կազմվում է արձանագրություն և հաշվետվություն՝ բենչմարքինգի արդյունքների և ստացված տվյալների վերաբերյալ:
- Հաշվետվությունը ներկայացվում է ՈԱՀ-ի քննարկմանը և հաստատմանը:
- Բենչմարքինգի արդյունքում կազմվում է միջոցառումների բարելավման ծրագիր:

ՌԻՍԿԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Բարձրագույն ուսումնական հաստատության կարևորագույն խնդիրներից մեկը ռիսկերի բացահայտումն ու դրանց կառավարումն է: Ռիսկի կառավարումն այնպիսի գործընթաց է, որի նպատակն է հայտնաբերել բուհի առջև ծառացած բոլոր ռիսկերը և համապատասխան ձևով դրանք կառավարել ու նվազեցնել:

Գործնականում ռիսկերի կառավարումը ընդունված է բաժանել 5 հիմնական փուլերի՝

1) ռիսկերի բացահայտում,

2) ռիսկերի դասակարգում,

3) ռիսկերի գնահատում,

4) ռիսկերի վերլուծություն,

5) ռիսկերի ազդեցության կառավարում՝ մեղմացում:

1) Ռիսկերի բացահայտում - գործընթաց է, որը նախատեսված է հայտնաբերելու բոլոր այն ռիսկերը, որոնք կարող են խոչնդոտ հանդիսանալ բուհի համար: Համալսարանի առաջնային խնդիրն է բացահայտել հնարավոր բոլոր ռիսկերը և կազմել հավանական ամբողջական ցանկ: Գործունեության և կառավարման ընթացքում ռիսկերը փոխվում են, որոշներն ավելանում են, որոշները պակասում են:

2) Ռիսկերի դասակարգում – ռիսկերը կարող են լինել.

- Արտաքին ռիսկեր՝ օրենսդրական փոփոխություններ, սոցիալական և քաղաքական միջավայր:
- Ներքին ռիսկեր՝ ուսանողների, դասախոսների և մասնագետների արտահոսք:

3) Ռիսկերի գնահատում - Ռիսկերի գնահատումն իրականացվում է հետևյալ փուլերով՝

- ***<u>Որակական գնահատում</u>*** - որակական վերլուծությունը ենթադրում է ռիսկերի ծագման պայմանների գնահատում: Որակական գնահատման խնդիրը յուրաքանչյուր ռիսկի կարևորության աստիճանի որոշումն և դրանց հակազդելու ձևերի և քայլերի ընտրությունը:
- ***<u>Քանակական գնահատում</u>*** - ասելով հասկանում ենք ռիսկերի ծագման հավանականության որոշումը և համալսարանի վրա ռիսկերի հնարավոր ազդեցությունը:

4) Ռիսկերի վերլուծություն - ռիսկերի վերլուծությունը բաղկացած է մի շարք քայլերից՝

ա) հնարավոր բոլոր քայլերի և արդյունքների դիտարկում,

բ) ռիսկերի գնահատումը և բաժանում՝ վերահսկելի և անվերահսկելի,

գ) արդյունքների ներկայացում՝ իրատեսական կամ ոչ իրատեսական,

դ) ռիսկերի առաջնային կամ երկրորդականի տարանջատում,

ե) հաճախ քանակական տվյալները հասանելի չեն կամ կասկածելի են:

Այս դեպքերում սովորաբար տարածվում են հետևյալ կոշտ գնահատականները՝

Աղյուսակ 1 Ծանրության գնահատում

Ծանրության աստիճան	Հետևանք	Ազդեցության նկարագրություն
1	Սահմանային	Մասնակի կխանգարի ծրագրի իրականացմանը
2	Նշանակալից	Կարևոր գործընթացի ընդհատում
3	Լուրջ	Կարևոր գործընթացի մի մասի չկատարում
4	Շատ լուրջ	Հիմնական գործունեության ցուցանիշների չկատարում
5	Աղետալի	Կարող է առաջացնել գործընթացի ձախողում

5) Ռիսկերի ազդեցության կառավարում՝ մեղմացում - Երբ վերլուծված են ռիսկերը, անհրաժեշտ է որոշել հետագա գործողությունները: Գործնականում առկա է ռիսկերի չորս հնարավոր պատասխաններ.

1) Նախապես կանխել ռիսկը - այսինքն, չձեռնարկել այն գործողությունը, որը կարող է առաջացնել տվյալ ռիսկը:

2) Փոխանցել ռիսկը - սովորաբար այն դեպքն է, երբ բուհը դիմում է ապահովագրական քաղաքականության ռիսկը փոխհատուցելու համար՝ դրանով իսկ հնարավոր ռիսկային միջոցառումը վերափոխելով:

3) Կրճատել ռիսկը - միջոցներ ձեռնարկել երկուսն էլ նվազեցնելու համար:

4) Ընդունել ռիսկը - օգտագործել բոլոր հնարավորությունները: Յուրաքանչյուր ռիսկի համար մշակել մեղմացման ռազմավարություն՝ համապատասխան քայլերով:

Ռիսկերի կառավարման գործընթացը պետք է ունենա հստակ ռիսկերի ցանկ և յուրաքանչյուր ռիսկի համար նախատեսված մեղմացման ռազմավարություն: Ի վերջո, խուսափելով մեկ ռիսկից՝ խուսափում ենք մեկ խնդրից: Սա է կառավարչի աշխատանքի մի մասը, ով անընդհատ վերագնահատում է կազմակերպության ռիսկերը:

Ներկայիս շուկայական տնտեսությունում համալսարանի կենսունակությունն ու կայուն մրցակցային առավելությունն ապահովելու և այն հետևողականորեն պահպանելու նպատակով ցանկացած բուհ նույնիսկ սահմանափակ ռեսուրսների պայմաններում պետք է կիրառի ռազմավարական կառավարման արդյունավետ գործիքներ, ժամանակ առ ժամանակ խորը վերլուծության ենթարկի առկա և սպառնացող ակադեմիական ռիսկերը և մշակի դրանք կառավարելու համապատասխան մեխանիզմներ:

ՌԻՍԿԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

N°	Գործառույթի և/կամ ենթահամակարգի նկարագիրը	Ռիսկի նկարագիր
1	Գիտահետազոտական գործունեություն	Գիտությամբ զբաղվող երիտասարդ կադրերով համալրումը
		Գիտահետազոտական բազայի արդիականացման տեմպերը
2	Բարձրագույն կրթության կազմակերպում	Արտասահմանյան բուհերի և կազմակերպությունների հետ համագործակցության հեռանկարային ծրագրեր
		Ուսանողների փոխանակման հեռանկարային ծրագրեր
		Ուսանողների պրակտիկաների կազմակերպման արդիականացման հնարավորությունների ընդլայնում
		Պրոֆեսորադասախոսական անձնակազմի սերնդափոխության տեմպեր
		Ուսումնական լաբորատորիաների, սարքավորումների արդիականացման տեմպեր
		Դիմորդների քանակի նվազում, ըստ տարիների, որի հետևանքով նվազում է նաև ֆինանսական հոսքերը
3	Ֆինանսական գործառույթներ	Ռման վարձերի անկանոն վճարումներ
		Օրենսդրության փոփոխություններ
		Վերը նշված բոլոր ռիսկային գործոնները թողնում են իրենց հետևանքները

IV. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բոլոնիայի հռչակագիր «European Higher Education Area and Bologna Process»: www.ehea.info:
2. Որակի ապահովման չափորոշիչներ և ուղենիշներ բարձրագույն կրթության եվրոպական տարածքում /Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիա/
3. Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համակարգերի ձևավորման ուղեցույց, 2011
4. ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ, Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն, 2015
5. ԵՊՀ ուսումնառության ռեսուրսները և ուսանողների աջակցության ծառայությունները: Գնահատում և բարելավում, ԵՊՀ ՈԱԿ, Եր.-2017
6. «Որակի ապահովման տերմինաբանական բառարան (աշխատանքային նյութեր) /Glossary of Quality Assurance (working papers)»
7. Որակի ապահովման ձեռնարկ ուսանողների համար, Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան, 2018
8. http://www.anqa.am/
9. ՈԱ ձեռնարկ, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, Եր.- 2014
10. ՈԱ ձեռնարկ, Ճարտարապետության և շինարարության ՀԱՀ, Եր.-2017
11. ՎՊՀ որակի ապահովման քաղաքականություն, Եր. 2019
12. Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ԿՓԵՀ) ուղեցույց 2015
13. «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը
14. Руководство по системе внутреннего обеспечение качества образования в университете «Туран Астана», 2019г.